Արգելում են հայրենասիրություն, ազգասիրություն, ազգային ամեն բան, ազգային դիմագիծ ունեցող թատրոնները փակվում են, Եկեղեցին, որն ամենաազգային կառույցն է, մեծ հարվածների տակ է, այսինքն՝ մեր երկրի ղեկավարը երկրի առաջին ամենամեծ թշնամին է, այդպես է ստացվում: Երբեք չէի պատկերացնի, որ կհասնենք նման կետի:

Կարդացեք՝ էջ 4

Ոչնչիսկ նախընտրական իրավիճակը Փաշինյանին չի ստիպում պահպանել արժանապատվության որոշ նորմեր: Նա իր իշխանության գոյությունը հանձնել է Ադրբեջանին ու Ալիեւին: Փաշինյանն իր իշխանության վերարտադրությունը կառուցել է ընդամենը մի բանաձեւի վրա՝ ինքը խաղաղություն է բերել: Բայց այդ խաղաղությունն իր ձեռքում չէ:

Կարդացեք՝ էջ 5

Մենք խոսում ենք հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության յուրացման մասին, բայց բոլոր ժողովուրդների պատմամշակութային ժառանգությունը յուրացնելու ճանապարհով են գնացել ադրբեջանցիները, քանի որ, որպես էթնոս, ձեւավորվել են 20-րդ դարում, «ադրբեջանցի» անվան տակ հանդես են եկել 1936թ. դեկտեմբերի 5-ից հետո:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 39 (4174), 14 մարտ, շաբաթ, 2026

www.hraparak.am

Որոշ տեղեկություններով, պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հրահանգել է ռազմական ոստիկանության պետին եւ ՆԳՆ պարեկային ծառայության ղեկավարությանը՝ «ռեյդ» իրականացնել զինվորականների շրջանում, պարզել՝ արդյոք բոլորն ունե՞ն վարորդական իրավունք, թե՞ կան մարդիկ, որ, օգտվելով իրենց կարգավիճակից, մեքենան վարում են առանց վարորդական իրավունքի: Ասում են՝ մեկ-երկու նման դեպքի մասին են նախարարին զեկուցել, նա էլ որոշել է ստուգել, թե որքանով են ճիշտ այդ լուրերը: Մեր աղբյուրն ասում է, որ զինվորական համազգեստով վարորդներին պարեկները կանգնեցնում են եւ, կատարելով Պապիկյանի հրահանգը, ստուգում վկայականի առկայությունը: Եվ այդ գործընթացը դժգոհության ալիք է բարձրացրել զինվորականների շրջանում, որոնք էլ ահազանգել են մեզ: Նրանք նոստալգիկ հիշողությունների մեջ են ընկել, թե անցյալում ինչ հարգանք ու սեր կար զինվորականների նկատմամբ, որ անգամ ԳԱԻ-ի տեսուչներն էին զինվորական համազգեստ տեսնելիս պատիվ տալիս ու ճանապարհում իրենց, որովհետեւ հայրենիքի պաշտպանների նկատմամբ հարգանք կար:

Կառավարությունը ողջ կազմով եկող շաբաթ կգրոհի Ազգային ժողովը: ԱԺ մշտական հանձնաժողովների քննարկմանն է ներկայացվել ՀՀ կառավարության ծրագրի 2025 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցը, եւ քանի որ 3 ամսից ընտրություններ են, իշխանությունն այդ քննարկումները վերածելու է նախընտրական քարոզարշավի եւ համաշխարհային մասշտաբի լապշաներ է կախելու ընտրողների ականջներից: Օրինակ, ԱԳՆ կատարողականի ներածությունում կարդում ենք. «Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ 2025 թ. օգոստոսի 8-ին խաղաղություն է հաստատվել: 2025 թվականն անկախությունից ի վեր առաջին տարին է, երբ Հայաստանի Հանրապետությունից ՀՀ քաղաքացիների արտագաղթը փոխարինվել է ներգաղթով: 2025 թվականին արձանագրվել է բարձր տնտեսական աճ (7,2%), ինչի արդյունքում 2021-2025 թթ. ՀՆԱ միջին տարեկան աճը կազմել է 7,9%, իսկ 2017-2025 թթ. կտրվածքով՝ 5,8% (2017 թվականի համեմատ կուտակային աճը կազմել է 53,9%)»: Երկիրը 8 տարում 4 պատերազմի միջով անցկացրած, 5 հազար զոհ տված իշխանությունը Հայաստանը դրախտավայր է դարձրել:

Անդառնալիության կետը

Մեզ թվում էր, թե կորցրել ենք զարմանալու ու զայրանալու ունակությունը: Որովհետեւ այս տարիներին այնպիսի հայտարարություններ են հնչել պետության առաջին դեմքի շուրթերից, որ դրանցից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, բավարար էր հրաժարական տալու, կամ հանրային պահանջով իրեն այդ պաշտոնից հեռացնելու համար: Բայց, հավանաբար, 20 թվի խայտառակ պարտությունը եւ նոյեմբերի 9-ի կապիտուլյացիան մարսելն այլեւս անպարտելի են դարձրել Նիկոլ Փաշինյանին, եւ նա սովորել է «էքստրեմալ» պայմաններում ապրելն ու վարչապետի պաշտոնում աշխատելը: Հաշտվել է ժողովրդի համատարած մերժման հետ: Ամբողջ հայության՝ իրեն ուղղված հրաժարականի պահանջները չտեսնելու է տալիս՝ թաքնվելով մի խումբ ոչ շատ կիրթ եւ մի խումբ իրենից սնվող անձանց ետեւում: Փորձում է ոչ միայն շարունակել պաշտոնավարել, այլեւ նորից ու նորից վերընտրվել: Եկեք արդար լինենք. եթե մարդն ասաց՝ «Արցախն Ադրբեջան է, եւ վերջ», եթե հանդուրժեց, որ ադրբեջանական բանակը ոչ միայն 5 տարի զբաղեցնի ՀՀ սուվերեն տարածքը, այլեւ քայլ-քայլ առաջ շարժվի ու ամրանա մեր հողում: Եթե կարողացավ մարսել Արցախի հայաթափումը, չպատժվեց Հայ առաքելական եկեղեցու դեմ նախաձեռնած նողկալի արշավի համար: Քրեական հանցանք չգործած մարդկանց՝ ընդամենը խոսելու, իրեն քննադատելու համար ստիպեց կալանք սահմանել, անգամ բարձրաստիճան հոգեւորականների ու կաթողիկոսի հեղինակությունից չերկնչեց: Ի՞նչը կարող է այլեւս նրան զսպել, ամաչեցնել, ստիպել, որ օրենքին ենթարկվի: Նա արդեն անցել է ռուբիկոնը եւ պատերազմ է հայտարարել սեփական ժողովրդին: Նա կառավարություն է, օրենք է, Սահմանադրություն է, դատախազ ու դատավոր է մեր երկրում: Եվ այդ բոլոր գործառույթները կատարում է խայտառակ վատ՝ վտանգելով մեր պետությունն ու ապագան:

«Ապրելու երկիր» կուսակցությունն առաջիկայում կհայտնի ընտրություններին մասնակցության ձեւաչափի մասին՝ երեկ մեզ ասաց կուսակցության համահիմնադիր Մեսրոպ Առաքելյանը: Տեղեկություններ կային, որ նրանք վերջին ամիսներին ինտենսիվ բանակցում են Գագիկ Ծառուկյանի հետ եւ միանալու են «Առաջարկ Հայաստանին» նախաձեռնությանը: Սակայն երեկ մեզ լուրեր հասան, որ համագործակցությունը գլուխ չի եկել: Մեր աղբյուրի փոխանցմամբ, ԱԵ հիմնադիր, Բաքվում գերության մեջ գտնվող Ռուբեն Վարդանյանի ընտանիքը կողմ չի եղել դրան, սակայն Մեսրոպ Առաքելյանը երեկ մեզ ասաց, որ դրանք հեքիաթներ են՝ իրականությունից հեռու: Մյուս թեւից մեզ ասացին, որ Ծառուկյանը հակված է եղել միայն Մանե Թանդիլյանին ընդգրկել, բայց դրան էլ «Ապրելու երկիրը» համաձայն չի եղել: Առաքելյանին հարցրինք՝ իսկ Արման Թաթոյանի հետ չե՞ն փորձել բանակցել: Ասաց. «Տարբեր ուժերի հետ եղել են ու կան քննարկումներ, վերջնական որեւէ որոշում չունենք դեռ»:

«ԲՌԱՍԼԵՏՆԵՐԻ» ԴԵՖԻՑԻՏ Է ԱՌԱՋԱՑԵԼ

Փաստաբանական համայնքի մեր աղբյուրներից տեղեկացանք, որ Հայաստանում էլեկտրոնային «բռասլետների» կրիզիս է այժմ: Խոսքն այլընտրանքային խափանման միջոցների կիրառության մասին է, որը գործում է 2023 թ. հունվարի 1-ից. տնային կալանքում եւ վարչական վերահսկողության ռեժիմում գտնվողների ոտքին նման «բռասլետներ» են անցկացնում՝ վերահսկելու համար: Հիմա այնքան շատ են տնային կալանքի տակ գտնվողները, որ այդ սարքերը քչություն են անում: Պաշտոնական տվյալներով՝ դրանց թիվը գերազանցում է 1200-ը: Հիմա սարքերի քանակը չի բավարարում բոլոր նրանց համար, ում նկատմամբ տնային կալանք կամ վարչական վերահսկողություն են սահմանել՝ որպես խափանման միջոց, ուստի ոմանց թույլատրել են տուն գնալ, բայց «բռասլետներ» չեն անցկացրել: Սակայն ամբողջ զավեշտն այն է, որ տանը «նստածներին» զգուշացնում են, որ տնային կալանքի պատժի ժամկետը կհաշվարկեն այն պահից, երբ «բռասլետ» ազատվի, եւ անցկացնեն հետապնդվողի ոտքին: Այսինքն՝ եթե, դիցուք, անձի նկատմամբ երկամսյա տնային կալանք են սահմանել, բայց «բռասլետը» նրան են տրամադրում մեկ ամիս ուշացումով, ստացվում է, որ նա երեք ամիս է այդ ռեժիմում մնալու, որովհետեւ ժամկետը հաշվվելու է «բռասլետ» տրամադրվելուց հետո, բայց մարդն այդ ընթացքում տնային կալանքի ռեժիմում է գտնվել:

ԲԱՆԱԿ

ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՏՐՎԱԾ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՊԱՊԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՌՈՉԻՆՉ Է

1992 թվականն էր: Որպես լրագրող, աշխատում էի Նոյեմբերյանի շրջանային «Ծիածան» թերթում: Օրաթերթ էինք հրատարակում, նաեւ՝ գործընկերոջս հետ շրջանային ռադիոյով լուրերի թողարկումներ պատրաստում-վարում: Սահմանագոտում լարված էր, կռիվներ էին: Այդ ժամանակ սահմանագոտու բնակիչներին 3 ամսով զինվորագրում էին: Երբ ես էլ զինվորագրվեցի, շրջանային թերթի գլխավոր խմբագիր, լուսահոգի Սամվել Բեգլարյանն ասաց, որ թերթի աշխատողները յուրատեսակ ճակատում են՝ նրանց զինկոմիսարիատից ազատում են զինծառայությունից: Ասացի, որ հայրենի՝ Ոսկեվան գյուղի պաշտպանությանը մասնակցել ինքս եմ ցանկանում, եւ 3 ամիս մարտական հերթապահություն արեցի Ոսկեվանի մարտական դիրքերում՝ Գադուկում, Զնգնգանում: Այդ ընթացքում թեժ մարտեր չեղան, սակայն ռմբակոծություններ լինում էին:

Հիշում եմ, որ ադրբեջանական զինուժը մեր դիրքը ռմբակոծեց, մեր հրանոթը կտոր-կտոր եղավ, բարեբախտաբար, ոչ ոք չտուժեց: 3 ամսվա մարտական ծառայության վերջում բոլորին մարտական գործողությունների մասնակցի վկայական, կրծքանշան, փոքրիկ վարձատրություն տվեցին: Անցած 33 տարում այդ վկայականը ոչ մի անգամ ցույց չեմ տվել, որեւէ արտոնությունից չեմ օգտվել: 2025թ. դեկտեմբերին բժշկական հետազոտություն պետք է անցնեի Երեւանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում: Այդ կենտրոնի առաջին հարկում, պետպատվերի բաժնում աշխատող աղջիկը հերթագրելով՝ ասաց, որ իմ անունն առկա է մարտական գործողությունների մասնակիցների ցանկում, բժշկական հետազոտության օրը ներկայանամ մարտական գործողությունների մասնակցի վկայականով: Նշանակված օրը վկայականով ներկայացա, սակայն աշխատողը, նայելով վկայականին, հայտնեց, որ այն չի անցնում, պետք է ուրիշ նմուշի վկայական ներկայացնել, դրա համար կառավարության ինչ-որ որոշում կա: Վճարեցի բժշկական հետազոտության գումարը՝ 25 հազար դրամը, հետազոտվեցի: Դրանից հետո 2025թ. դեկտեմբերի 24-ին տեղեկատվական հարցում ուղարկեցի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին. «Նոյեմբերյանի սահմանագոտին պաշտպանելու համար 1992 թվականին ստացել եմ «1992-1994թթ. մարտական գործողությունների մասնակից» կրծքանշան եւ վկայական: Որոշ բուժծառայություններից անվճար օգտվելու համար դիմել եմ, սակայն բժշկական կենտրոնում հայտնել են, որ դրա համար գոյություն ունի կառավարության 2004 թվականի ինչ-որ որոշում, ես պետք է համապատասխան հաշվառում անցնեմ: Որտեղ, ինչ կարգով պետք է հաշվառվեմ, որպեսզի կարողանամ օգտվել բուժծառայություններից օգտվելու արտոնությունից»:

2026թ. հունվարի 14-ին ստացել եմ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի ստորագրությամբ պատասխան, որտեղ նշված է. «Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ կարող է տրամադրվել միայն ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1664-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 1989-1994 թվականների ընթացքում ՀՀ սահմանների պաշտպանության մարտական գործողություններին ոչ պակաս, քան 3 ամիս ընդհանուր տեւողությամբ մասնակցած անձանց: ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշմամբ սահմանվել է Մարտական գործողությունների կարգավիճակ ստանալու կարգը, եւ ձեւավորվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու վերաբերյալ եզրակացություն կայացնող միջգերատեսչական հանձնաժողովը: ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու համար ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշմամբ ձեւավորված միջգերատեսչական հանձնաժողովի նախագահին (ի պաշտոնե՝ ՀՀ պաշտպանության նախարարն է) ուղղված դիմումին կից անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

1) մարտական ուղին՝ հաստատված մարտական գործողություններին մասնակցած ստորաբաժանման հրամանատարի (պետի) կողմից (անհրաժեշտության դեպքում՝ նաեւ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստացած այլ անձանց վկայագրեր)

2) 1989-1994 թվականների ընթացքում մարտական գործողություններին մասնակցությունը հավաստող արխիվային հրամանների՝ սահմանված կարգով վավերացված քաղվածքները

3) վիրավորվելու, վնասվածք ստանալու վերաբերյալ արխիվային փաստաթղթերը (առկայության դեպքում)

4) տեղեկանք զինվորական կոմիսարիատից անձնագրի, սոցքարտի եւ զինգրքույկի լուսապատճենները

5) լուսանկարը (2 հատ 3x4 չափի, 1 հատ 9x16 չափի)

6) մարտական գործողություններին մասնակցությունը հավաստող այլ փաստաթղթեր (օրինակ՝ պարգեւատրումների, մարտական գործողություններին մասնակցելու ընթացքում վիրավորման, վնասվածք ստանալու հետեւանքով բուժման մեջ գտնվելու վերաբերյալ եւ այլն)»:

Ուրեմն՝ 1992-ի սեպտեմբերի 19-ին, Վազգեն Սարգսյանի ստորագրությամբ ինձ տրված մարտական գործողությունների մասնակցի վկայականն առոչինչ է, պետք է 34 տարի առաջվա իմ հրամանատարին գտնեմ, նրանից տեղեկանք վերցնեմ, որ մասնակցել եմ մարտական գործողություններին, արխիվից ինչ-որ հրամանների քաղվածքներ հանեմ: Ինձ դա պետք չէ, թող պարտադիր զինծառայություն չանցած, արցախյան ազատամարտին չմասնակցած Նիկոլ Փաշինյանը շարունակի համարվել գերագույն գլխավոր հրամանատար, մասնագիտությամբ պատմության դասատու Սուրեն Պապիկյանը՝ պաշտպանության նախարար, զինվորական կրթություն չունեցող նրա 3 տեղակալներն էլ ղեկավարեն ռազմական գերատեսչությունը՝ մեծ պարգեւավճարներ ստանալով:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԸՆՏՐԱԽԱԽՏՆԵՐԻ ՈՐՍԸ ՔՊ-ՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Հշխող «Քաղպայմանագրում» զեղծարարների որսը շարունակվում է. խոսքը հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների նախընտրական ցուցակը ձեւավորելու նպատակով անցկացված ներկուսակցական ընտրությունների ժամանակ կատարված խախտումների մասին է: Հիշեցնենք, որ կուսակցության առաջնորդն արգելել էր քարոզարշավ անել եւ ուղղորդել ՔՊ ընտրիչներին, որոնք հիմնականում շարքային կուսակցականներ էին՝ 1000 հոգի: Սակայն ընտրություններից հետո պարզվեց, որ որոշ թեկնածուներ չեն ենթարկվել՝ ուղղորդել են պատվիրակներին, եւ նրանց հաջողվել է բարձր ձայներ հավաքել ու ցուցակի բարձր տեղերում՝ 50-յակում հանգրվանել:

Այսինքն, որքան էլ Նիկոլ Փաշինյանը հանրության առջեւ պարծենում է, թե նորանկախ Հայաստանի պատմության մեջ իր իշխանությունը միակն է, որ ընտրություններ չի կեղծել, անցած 8 տարիները ցույց տվեցին, որ այս մարդիկ անգամ ներկուսակցական ընտրություններն են կեղծում, էլ ուր մնաց՝ համապետականի ժամանակ նման բան չանեն: Հիշեցնենք, որ տարիներ առաջ ՔՊ վարչության նախորդ ընտրություններում եւս նման կազմակերպված գործողություններ իրականացվեցին, որոնք էական ազդեցություն թողեցին արդյունքների վրա: Ի վերջո, ստիպված եղան վերահաշվարկ անել, եւ որոշ ՔՊ-ականներ, որոնք կեղծիքներով էին հայտնվել վարչության կազմում, իրենց տեղը զիջեցին ուրիշներին: Պատմությունը կրկնվել է նաեւ փետրվարի 13-15-ին տեղի ունեցած ընտրությունների ժամանակ:

Արդեն տեղեկացրել ենք, որ, վարչության որոշմամբ, ցուցակից հեռացվել են առաջին 50 ընտրյալների շարքերում հայտնված նախկին ՔՊ-ական պատգամավոր՝ փարաքարցի Կարեն Գրիգորյանը, գործող պատգամավոր՝ սյունեցի Դավիթ Դանիելյանը: Կասկածյալների շարքում է նաեւ Վայոց Ձորի մարզպետի խորհրդական, Վայքի տարածքային կառույցի անդամ Հայկ Ավագյանը, որն ընտրությունների արդյունքներով 50-րդն է, սակայն կանանց պարտադիր քվոտան լրացնելու համար տեղը զիջել է կանանց եւ «ուրախ ավտոբուսի պասաժիրների» հետ մարզային այցերին չի մասնակցում: Այցերին մասնակցում է առաջին 50 հոգին:

Չնայած այն փաստին, որ Ավագյանն արդեն 50-յակի մեջ չէ, կուսակցությունից որոշել են նրան եւս մեղադրյալի աթոռին նստեցնել. երեկ նա վարչություն է կանչվել եւ կուսակտիվի հարցերին ու մեղադրանքներին պատասխանել՝ ինչպես կարող էիր այդքան ձայն հավաքել եւ եզրափակել պատվավոր 50-յակը: Մինչ այս պահը Ավագյանի դեմ կարծես ապացույցներ չկան, ուստի վարչությունը վերջնական որոշում, Ավագյանի վստահեցմամբ, չի ընդունել: Թեպետ մեր աղբյուրներն ասում են, որ նրա հարցն էլ է վճռված, եւ նրան էլ են հեռացնելու ցուցակից:

«Մեղադրյալն» արդարացել է, թե ՔՊ համագումարի եւ վարչության ու վերահսկող հանձնաժողովի ընտրության ժամանակ ինքը նույնքան ձայն է հավաքել, երբ առաջադրվել էր վերահսկող հանձնաժողովի անդամի թեկնածու, ուստի զարմանալի եւ արտասովոր բան տեղի չի ունեցել: Երեկ մենք զրուցեցինք **Հայկ Ավագյանի** հետ, որը կցկտուր պատասխաններ տվեց: Պարզվում է՝ իրեն ժողովրդավար կուսակցություն հռչակած ՔՊ-ում մարդիկ թույլտվություն պետք է ստանան ՔՊ աշխատակազմից, որ լրագրողների հետ զրուցելիս կարողանան կարծիք հայտնել: «Վարչության որեւէ որոշում՝ իմ հետ կապված, չկա, սխալ եք զանգել»,- մեր զանգից խառնվեց Ավագյանը: Հարցրինք՝ իսկ ինչո՞ւ էին իրեն երեկ վարչություն հրավիրել: «Դե, կուսակցական աշխատանքների հետ կապված հարցեր կան քննարկելու»: Թե ինչ հարցեր, չմանրամասնեց. «Ճիշտ չեմ համարում, առանց կուսակցությանը տեղյակ պահելու, խոսել այդ հարցերի մասին»:

Կուսակցությունում կասկածներ ունեն Ձեր ստացած ձայների մասով, գուցե Դուք ի՞լ եք ուղղորդել պատվիրակներին, որ Ձեր օգտին քվեարկեն: «Դուք մասնագիտական հարցադրումներով ուզում եք ինչ-որ բան իմանալ, բայց այս պահի դրությամբ ես չեմ կարող Ձեր հարցերին պատասխանել, մինչեւ կուսակցության հետ չքննարկեմ: Ինձ թույլ տվեք՝ Ձեր հարցերին չպատասխանեմ, քանի որ կուսակցության կողմից չկա համապատասխան թույլատվություն, որ ես լրագրողի հետ տվյալ հարցը, որ դեռ օդում կախված է, այսինքն՝ դրանք զուտ լրատվական միջոցներում տեղեկատվություն են սփռվել, եւ ես չեմ կարող դրանց մասին խոսել»: Այսինքն, Ձեր մասով չկա՞ն կասկածներ: «Չկա որոշում, ոչ մի բան չկա»: Դուք ուղղորդումնե՞ր եք արել, զեղծարարություններ, Ձեր կուսակիցներն են նման տեղեկություններ տարածել: «Կուսակցությունից ով նման բան է ասում, խնդրում եմ՝ այդ մարդուց էլ հետաքրքրվեք ու նյութը հրապարակեք, ես մինչեւ չխոսեմ կուսակցության աշխատակազմի ղեկավարի հետ, չեմ կարող Ձեզ պատասխանել: Այո, կանանց քվոտայի տեղերի բաշխման արդյունքում ես դուրս եմ մղվել 50-ից, բայց չգիտեմ՝ ես որ տեղում եմ: Եվ հետո՝ ինչո՞ւ պիտի կասկածի տեղիք տան իմ ձայները, եթե ես ընդամենը 4.5 ամիս առաջ էլ այսքան ձայն եմ հավաքել, ուղիղ նույն քվեն եմ տարել վերահսկողության հանձնաժողովի ընտրությունների ժամանակ: Ուստի նման հարց էս պահի դրությամբ, իմ հետ կապված, չկա»,- ասաց Ավագյանը: Իսկ բացառո՞ւմ եք, որ կլինի: «Ես շատ գիտեմ՝ ինչ կարա լինի, իսկ Դուք գիտե՞ք՝ մի որպե հետո Ձեր հետ ինչ կարա լինի, Աստծու գործերն անկանխատեսելի են»:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԵՎՍՏԿ

ԻՆՉՈՒ ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԸ ՉԵՆ ՈՒԶՈՒՄ ՀԱՆԴԻՊԵԼ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԽՄԲԻ ՀԵՏ

ՀՀ իշխանությունները ոչ պաշտոնապես բոյկոտ են հայտարարել «Հայաստանում ժողովրդավարության միջազգային դիտարան» (IODA) անկախ փորձագետների խմբին: Նրանց հետ չեն հանդիպում, խոչընդոտում են փաստահավաք առաքելությանը: Հայտնի իրավապաշտպանների հետ հանդիպել է միայն ՄԻՊ-ը, գրավոր պատասխանել են ՆԳՆ-ն եւ ՍԴ-ն: Մյուսներն ուղղակի անտեսում են IODA-ին: Փորձագետները ստիպված են օրերով զանգահարել ՔՊ-ականներին, կառավարություն: Նրանց, կոպիտ ասած, ցրում են: Նույն ՀԿ սեկտորից էլ ոչ բոլորն են համաձայնում հանդիպել IODA-ի հետ: Դիտորդական խմբերը նույնպես՝ տարբեր պատճառաբանություններով մերժում են նրանց: Օրինակ, դիտորդական խմբերից մեկն ասել է, թե «թրեյնինգի» է մասնակցում եւ չի կարող հանդիպել նրանց հետ:

Թվում է, թե եվրոպամետ Փաշինյանը պետք է դեմքը պահեր եվրոպացի հանրաճանաչ իրավապաշտպանների առաջ: Խմբում, որը մարտից փաստեր է հավաքում՝ ՀՀ-ում ժողովրդավարության պահանջներն ԱԺ ընտրություններից առաջ ուսումնասիրելու ու զեկույցով ներկայացնելու համար, Human Rights Watch-ի երկար տարիների ղեկավար Քենեթ Ռոթն է, որը ներկայում Փրինսթոնի համալսարանում է դասախոսում, Human Rights Watch-ի՝ Մերձավոր Արեւելքի ծրագրի նախկին տնօրեն Սառա Լի Ուիթսոնը, ֆրանսահայ իրավաբան եւ դատավոր Ֆիլիպ Քալֆայանը, Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախկին գլխավոր քարտուղարը, բրիտանացի փաստաբան Մարկ Զոնսը:

Բայց ՔՊ-ականները, կարելի է ասել, արգելափակել են իրավապաշտպաններին: Եվրոպայից ժամանած դիտորդների տպավորություններն էլ, որոնք նրանք ստացել են ընդդիմադիր ուժերի, ՀԿ սեկտորի հետ հանդիպումներից, դառն են: Երբեք, անգամ նախկին իշխանությունների օրոք, հայաստանյան ընտրական մթնոլորտն այսպիսի կոշտ գնահատականների, քննադատության չէր արժանացել:

«Մենք լուրջ մտավախություն ունենք այն հարցում, թե արդյոք ժողովրդավարական պայմաններն առկա՞մ են, որ հնարավոր դարձնեն ազատ, անկախ խորհրդարանական ընտրությունները: Մենք մտահոգված ենք, որ տարբեր փորձեր են արվում՝ միջամտելու դատական համակարգի անկախությանը, Եկեղեցու անկախությանը, եւ մենք մտահոգված ենք քաղաքականացված քրեական հետապնդումներով՝ իշխող կուսակցության հակառակորդ ընկալվող անձանց նկատմամբ»,- լրագրողներին հայտարարել է Քենեթ Ռոթը: Նա հիշեցրել է, որ Փաշինյանը միայն թեկնածու չէ, այլեւ ժողովրդավարական երկրի առաջնորդ, որը պետք է պաշտպանի ժողովրդավարությունը: «Պատշաճ չէ, որ վարչապետն օգտագործի պետության ռեսուրսները եւ իշխանությունը, որպեսզի ընտրական դաշտը թեքի իր օգտին»,- ասում է հայտնի իրավապաշտպանը:

Փորձագետները կարեւոր շեշտադրում են անում. «Տպավորությունն այն է, որ եվրոպական բազմաթիվ կառավարություններ, ԱՄՆ կառավարությունը Հայաստանը դիտարկում են առաջին հերթին որպես աշխարհաքաղաքական սուբյեկտ, իրենց ամենաշատը, կարծես, հետաքրքրում է կոնկրետ թեկնածուի արեւմտամետ կամ ռուսամետ լինելը, իրենց կարծիքով, իրենք կարծես պատրաստ են աչքերը փակել ժողովրդավարության զիջումների վրա, եթե դրանք իրականացվում են ռուսական ազդեցությունը կանխելու նպատակով»:

Քաղաքական կալանավորումները՝ ազատ խոսքի համար, անվտանգային ու ոստիկանական ուժերի կիրառումը, նախնական կալանքի երկար ժամկետները, իշխանության հարյուրավոր զրպարտության հայցերը, այն ամենը, ինչ տեսնում է ու գիտի ՀՀ հասարակ քաղաքացին, ինչի մասին մենք ամեն օր խոսում ու գրում ենք, նկատել են նաեւ Արեւմուտքից ժամանած փորձագետները: Ըստ Սառա Լի Ուիթսոնի՝ «մարդկանց մեղադրում են, ըստ երեւույթին, քաղաքական իրավախախտումների մեջ՝ նրանց պահելով բանտում կամ տնային կալանքի տակ: Սամվել Կարապետյանը՝ հայտնի կուսակցություններից մեկի առաջնորդը, այս պահին մնում է տնային կալանքի տակ, եւ շատ դժվար է պատկերացնել, որ ազատ ընտրություն կարող է տեղի ունենալ այն պայմաններում, երբ քաղաքական կուսակցության առաջնորդը մեղադրվել է ընդամենը խոսքի հետ կապված իրավախախտման մեջ եւ մնում է կալանավորված: Դա լավ տպավորություն չի թողնում Հայաստանի ժողովրդավարության առումով»: Նման բացասական գնահատականն ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ Հայաստանի ընտրություններից առաջ:

«Իրավունքների պաշտպանություն՝ առանց սահմանների» ՀԿ-ի իրավական հարցերով փորձագետ **Աննա Մելիքյանը**, որը ՀԿ սեկտորի այն ներկայացուցիչներից է, ովքեր հանդիպել են IODA-ի հետ, ասում է. «Իրավիճակի ցանկացած գնահատական կարեւոր է՝ հաշվի առնելով, որ Հայաստանում տիրող մարդու իրավունքների եւ ժողովրդավարության իրավիճակը կարծես թե միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում չի գտնվում: Գուցե մեր հարեւան երկրների վիճակի ֆոնին չի համարվում հրատապ խնդիրներ ունեցող երկիր»: Ի՞նչ տպավորություն ունի, հաշվի առնելով, որ հանդիպումը փակ է եղել՝ հարցրինք «Լրագրողներ՝ հանուն մարդու իրավունքների» կազմակերպության ղեկավար **Ժաննա Ալեքսանյանին**, որը միակն է հայաստանյան իրավապաշտպաններից, որ աշխատել է Human Rights Watch-ի հետ, մասնակցել 2008 թվականի մարտի 1-ի վերաբերյալ ծավալուն զեկույցի պատրաստմանը, նաեւ Human Rights Watch-ի Տաշքենդի եւ Ալմաթիի գրասենյակներում է աշխատել: «Ես անձամբ ծանոթ չեմ Քենեթ Ռոթի հետ, որը 30 տարի այս միջազգային հեղինակավոր կազմակերպության գործադիր տնօրենն է եղել: Նա բացարձակ հեղինակություն ունի միջազգային ասպարեզում, եւ կարծում եմ, որ շատ կարեւոր է նրանց այցը Հայաստան: Նրանք բացարձակ անաչառ, ապակուսակցական իրավապաշտպաններ են, եւ գտնում եմ, որ նրանց հետ հանդիպելու իշխանությունների մերժումը պայմանավորված է հենց նրանց անաչառությամբ, նրանց կողմից իրական գնահատականներ տալու հետ: Այդ կազմակերպության համար հենց մարդու իրավունքներն են առաջնային, եւ նրանք արձանագրելու են այն, ինչ կատարվում է այսօրվա Հայաստանում: Իսկ այն, ինչ կատարվում է Հայաստանում, շատ մոտ կան դաշտը թեքի իր օգտին»,- ասում է հայտնի իրավապաշտպանը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐ, ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ, ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐ, ՈՏՔԻ ԿԱՆԳՆԵՔ

«Արցախի մասին ամեն նախադասություն նշանակում է պատերազմի կոչ, ասում են՝ վերադարձ, ի՞նչ վերադարձ: Ղարաբաղցիները պետք է մեկընդմիշտ մոռանան Ղարաբաղ վերադարձի մասին եւ մշտական բնակվեն Հայաստանում»: Սրանք Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի վերջին օրերի խոսքերն են՝ Արցախի մասին, բայց սա դեռ ամենը չէ: Փաշինյանը հայտարարել է, որ Ցեղասպանության թանգարանի տնօրենին անձամբ ինքն է առաջարկել աշխատանքից ազատվելու դիմում գրել, քանի որ վերջինս հանդգնել է Արցախի մասին պատմող գիրք նվիրել ԱՄՆ փոխնախագահ Վենսին: Իսկ դա Փաշինյանը գնահատում է այսպես. «Հայաստանում չի կարող երկու արտաքին քաղաքականություն վարվել», չնայած թանգարանի տնօրենն արտաքին քաղաքականություն չի վարում, այլ իր բուն գործն է անում: Ստացվում է՝ հայ պատմաբանները պետք է այրեն պատմության բոլոր գրքերը եւ առաջնորդվեն այն «Հայաստանի պատմությամբ», որտեղ էապես խմբագրված են Հայոց պատմության կարեւոր էջերը: Թեմայի մասին «Հրապարակը» զրուցել է ԵՊՀ Արեւելագիտության ֆակուլտետի նախկին դեկան, պրոֆեսոր **Գուրգեն Մելիքյանի** հետ:

- Փաշինյանն արդեն արգելում է Արցախի մասին գրքերի շրջանառությունն ու ընթերցանությունը: Ի՞նչ նախադեպ է սա, ինչո՞ւ է Փաշինյանն այս քայլին դիմում:

- Արցախը ետ է վերադառնալու: Վարչապետները՝ բոլորը, քամիներ են, այսօր կան, վաղը չկան, նրանք կգան ու կգնան, բայց մեր հայրենիքը մնալու է: Նա աշխատանքից ազատում է այսօր մի կնոջ, որը համարձակվել է Արցախի մասին խոսել: Նա երբ աշխատելու եկավ՝ 2018 թվականին, ասաց, որ ինչ ուզի, անելու է: Հայաստանը դարձել է բռնատիրական երկիր: Մեր ժողովուրդը ոտքի է կանգնելու, իսկ այդ մարդը գիտի, որ այլեւս իրենից ոչ մի բան չի ներկայացնում:

- Գիտնականները, պատմաբանները այս իրավիճակում ի՞նչ պետք է անեն:

- Էլիտան պետք է ոտքի կանգնի եւ խոսի, զարմանալիորեն՝ երեմիական (դժգոհ հոռետեսությամբ՝ Հ. Գ.) ձեւով պապանձվել են: Ես՝ որպես հայ մարդ, շատ եմ ցավում այս ամենի համար, այս իրավիճակում չի կարելի լռել: Այս մարդը մեր հայրենիքի լինելիությունը ժխտում է:

- Սովետական Միության տարիներին ո՞ր գրականությունն էր արգելված, եթե համեմատական անցկացնենք այսօրվա հետ:

- Ես հիշում եմ, որ Ռաֆֆու գրքերի հրատարակությունը անգամ մի շրջան կար, որ չարգելեցին, հիմա այս մարդիկ դպրոցական ծրագրերից Ռաֆֆուն հանում են: Մեր ուսումնական ծրագրերից հանում են մեր մեծերին, բայց մատնաչափ մի կասկածեք, որ ամեն ինչ լավ է լինելու, ժողովուրդն իր մեջ ուժ է գտնելու եւ ոտքի է կանգնելու:

- Իսկ ընտրությունների հետ կապված՝ ի՞նչ սպասելիքներ ունեք:

- Ես անգամ կարծում եմ, որ մինչեւ ընտրություններ այս պարոններն իրենց փասափուսան հավաքելու են ու հեռանան: Մեր ժողովուրդն արդեն այս կերպարին լավ է ճանաչում: Ամեն ինչ լավ է լինելու:

- Ի՞նչ եք կարծում՝ եթե Փաշինյանն արգելում է կարդալ Արցախի պատմությունը ներկայացնող գրականություն, եթե դա նրա համար պատերազմի սպառնալիք է ու արգելված գրականություն, այդ պարագայում ինչպե՞ս կարող ենք դիմադրել այդ ամենին:

- Մտավորականները, գիտնականները, պատմաբանները պետք է ոտքի կանգնեն: Սամվել Մուրադյանը, Դավիթ Գասպարյանն ու էլի շատ մտավորականներ խոսել են այդ մասին, պետք է մնացյալները եւս խոսեն, պետք է հարց ուղղեն սրանց՝ ինչպե՞ս եք համարձակվում: Գալու է այդ գեղեցիկ օրը, եւ մենք անպայման իրար շնորհավորելու ենք հայկականությունը վերականգնելու համար: Հայը հաղթելու է, մազաչափ կասկած չունենաք: Ամեն ինչ լավ է լինելու, հայը միշտ էլ հաղթել է թշնամուն:



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՄԻ ՔԱՆԻ ՀՈԳՈՎ ՄՏԵՔ ՄԻ ՍԵՆՅԱԿ, ԿՌՎԵՔ, ԻՐԱՐ ԾԵԾԵՔ, ՈՐՈՇԵՔ՝ ՈՎ Է ԼԱՎԸ, ՈՒ ԱՆՈՒՆԸ ԳՐԵՔ

«Հրապարակի» զրուցակիցը՝ **Ստեփան Դավթյանը**, մասնագիտությամբ տնտեսագետ է, հին կոմունիստներից, որ 1977 թվականից աշխատել է կառավարության գործերի կառավարչությունում: 13 վարչապետ է տեսել այդ շենքում, թոշակի է գնացել Տիգրան Սարգսյանի օրոք: Այսօր էլ ձեռքերը ծալած չի նստում: Շատ գործիչների նման, Հայաստանի փրկության ծրագրեր ու հայեցակարգեր է մտմտում: Դիմադրության շարժման շարքերում 2022 թվականի ապրիլին մասնակցել է Փաշինյանի դեմ ուղղված քաղաքացիական անհնազանդության ակցիաներին: Բայցեւայնպես, իր որոշ տեսակետներով արմատապես տարբերվում է մյուս ընդդիմադիրներից: Նախ, ի տարբերություն շատերի, չի մեղադրում ժողովրդին, առանց որի 2018 թվականի իշխանափոխությունն անհնար էր: Երկրորդ. չի մեղադրում Նիկոլ Փաշինյանին: Հենց վերջինս բերեց կառավարության իր կառուցվածքը, որում նախարարություններ էր միացնում, գյուղնախարարությունը, որն ԱՄՆ-ում իր հզորությամբ Պենտագոնից հետո երկրորդ պետական կառույցն է, վերացվում էր, կառավարության փորձառու աշխատողը համոզվեց, որ Նիկոլին չարժե մեղադրել, որովհետեւ սա թշնամական ծրագիր է, որը նա պետք է կատարի, եւ այդ մարդը վտանգավոր է, լավ կլինի՝ նրան 10-15 հազար դոլար թոշակ նշանակել, որ թողնի հեռանա: Նախկին չինովնիկը մի փաստաթուղթ է մշակել՝ հայեցակարգ, որը վերնագրել է՝ «Հայաստանի առաջարկը կուսակցություններին»: Հայաստանը ժողովուրդն է, որն իրեն 2018 թվականի պլանավորված իշխանափոխության մեջ մեղադրող կուսակցականներին պատասխանում է՝ ես մերժել եմ Սերժին, բայց Նիկոլին դուք եք ընտրել ու նշանակել վարչապետ: Նրան մի քանի հարց ուղղեցինք:

- Ո՞նց՝ մենք չե՞նք ընտրել Նիկոլին: Մենք՝ ժողովուրդը:

- Նիկոլին ընտրեցին կուսակցությունները: Ասենք՝ Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց, բա ինչո՞ւ քաղաքական ուժերը համաձայնեցին Նիկոլի տարբերակին: Այդպես չէ՞: Բազառն իրենք արեցին: Միայն Աղվան Վարդանյանը եւ Միհրան Պողոսյանը կռիվ տվեցին դրա դեմ: Ուրեմն շատ ուժեր էլ հոգնել էին այդ վիճակից եւ փոփոխություն էին ուզում: Թշնամին էլ օգտվեց այդ վիճակից ու լուծեց տարիներով նախապատրաստած իր երազանքը:

- Ձեզ լսելով, հիշում եմ ժողովրդի պահվածքը Փաշինյանի վերջին մարզային այցելությունների ժամանակ՝ Շիրակ, Աշտարակ, Արթիկ: Ամբողջ հյուսիսով անցավ «ուրախ ավտոբուսը», ու հարյուրավոր մարդկանցից, որոնց հետ նա խոսեց, միայն մեկ-երկու հոգի քաղաքական հարցեր տվեցին՝ սահմանների անվտանգության մասին, Եկեղեցու, Արցախը հայկակա՞ն է, թե՞ ոչ: Մյուսներն իրենց անձնական հարցերն էին առաջ բրթում, սա չէ՞ մեր ժողովուրդը:

- Այդ հանդիպումների ժամանակ բերել՝ նիկոլականներին էին հավաքել: Բայց մարդկանց հետ զրուցելուց այլ բան եմ նկատում: Թե՛ Դիմադրության շարժման ընթացքում, թե՛ Սրբազան պայքարի օրերին մենք թույլ ենք տվել միեւնույն սխալները: Միշտ նշում ենք ժողովրդի բացառիկ դերը, որ ժողովուրդն է որոշում, ամեն ինչ բարդում ենք ժողովրդի վրա: Երբ մեկին անընդհատ սովորեցնում ես, ասում ես, թե նա ինչ պիտի անի, որ նա պարտավոր է, նա սխալ է եւ այլն, ապա լավագույն դեպքում նա շուռ է գալիս, գնում է: Վատագույն դեպքում ասում է՝ տո դե, ռադդ քաշի: Հիմա մեր ժողովուրդն այս վիճակում է: Պատճառը դա է, որ դուրս չի գալիս ընտրությունների: Ամեն անգամ մենք նրան դեմ ենք տալիս ընտրությունների մի մոդել, որը նա՝ ժողովուրդը, չի ընդունում: Ասում ենք՝ եկեք, առանձին-առանձին ձայն տվեք մեզ, որ հետո միանանք: Նա էլ ասում է՝ բոլորդ էլ մեկ եք, ու չի մասնակցում ընտրություններին: Ընդդիմադիր ուժերը միասնական չեն: Թշնամու ուզածն էլ դա է՝ հավաքում է քիչ ձայն, բայց արդյունքում անցնում է: Ոչ ոք չի հարցնում ժողովրդին, թե նա ինչ է ուզում: Իսկ ժողովուրդն ուզում է իրական միասնություն: Քաղաքական ուժերը պայման են դնում՝ հաղթենք, որ միանանք, իսկ ժողովուրդն ասում է՝ միացիր, աչքս տեսնի, եւ կհաղթես: Եթե 3-4 հոգով համաձայնության չեք գալիս, ապա միլիոնավոր ժողովրդից ի՞նչ եք ուզում:

- Ի՞նչ անել:

- Ստեղծել մեկ դաշինք՝ մեկ օրակարգով: 2021 թվին մենք ունեինք մեկ դաշինք, կուսակցություններն այդ դաշինքն էին կազմել: Լավն էր, վատն էր, բայց մարդիկ ճիշտ էին մտածել: Ռոբերտ Քոչարյանը եկավ ու դրանով խանգարեց, դաշինքը մասնատեց: Ես չեմ մեղադրում նրան: Թշնամին նրան երկու տարի բանտում պահեց, դրանից հետո բաց թողեց, ու 9:0 հաշվով Նիկոլի կրկնի տակ գործող Սահմանադրական դատարանը նրան արդարացրեց: Ինչո՞ւ: Քոչարյանը դուրս եկավ ու ասեց՝ կրելու եմ, ու քանդվեց միասնությունը, որն այն ժամանակ, շատ թե քիչ, կար: Մի Վազգեն Մանուկյան էր ու մի Նիկոլ Փաշինյան: Մեկը մեկի դեմ, հաստատ կրելու էինք: Բայց Քոչարյանը եկավ, բաժանեց: Դաշնակցականները, մի երկու ուժ միացան Քոչարյանին, ու ստացվեց այնպես, որ կռվից, հողեր հանձնելուց հետո Նիկոլը նորից մնաց իշխանության: Քոչարյանին լավ ճանաչելով, որ կամային, իշխանություն սիրող տղա է, օգտագործեց՝ հասկանալով, որ նրա միջոցով կմասնատի ընդդիմությանը: Սա ծուղակ էր: Հիմա նույնն է լինելու: Այն ժամանակ 12-13 կուսակցությունների ձայներ փոշիացվեցին, հիմա այդ 12-13 կուսակցությունները մի քանի դաշինք են ստեղծում, էլի առանձին, ու էլի ձայները փոշիանալու են: Հիմա ժողովրդին ասում ենք՝ մասնակցիր ընտրություններին, որ հաղթենք, Նիկոլին ձայն մի տվեք, մեզնից ում ուզում եք, տվեք: Ժողովուրդն էլ որոշում է, որ, ուրեմն, սա պաշտոնի, իշխանության կռիվ է:

- Ամենահնարավոր երկընտրանքն այսօր Նիկոլ Փաշինյան-Սամվել Կարապետյան այլընտրանքն է: Տեր-Պետրոսյանն է անգամ նրա անունը տալիս, այլ գործիչներ, հարցումներ կան, արդյո՞ք կհամախմբվեն քաղաքական ուժերը Սամվել Կարապետյանի շուրջ, թե՞ սա հեքիաթ է մեր կուսակցությունների համար, ու նրանք երբեք չեն միանա մեկ անձի շուրջ:

- Հեքիաթ չի: Մեկը Սամվելին չի սիրում, մեկը Դաշնակցությանը չի սիրում, բայց նույն տողի տակ ընտրում է: Ժողովրդին պետք է միասնության մոդել ցույց տալ: Թող ընտրական թերթիկում լինի, ասենք, երկու անուն՝ Նիկոլ ու «Ժողովուրդ» դաշինք, որի մեջ կլինեն Դաշնակցությունը, ԲՀԿ-ն, Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստանը», Հանրապետականը, թող լինեն նրանք էլ՝ մյուս կուսակցությունները: Հայաստանի առաջարկը կուսակցություններին սա է՝ եթե դուք չեք միանում 3-4 հոգով, ինձնից ի՞նչ եք ուզում: Մի քանի հոգով մտեք մի սենյակ, կռվեք, իրար ծեծեք, որոշեք, թե ով է լավը, ու մեկին գրեք: Թող լինի Նիկոլ ու «Ժողովուրդ» դաշինք:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

8 ՏԱՐՈՒՄ ՍՏԵՂԾԵԻՐ, ԹԵ՞ ԴՈՒ ՄԵՆԱԿ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՍ

«Հրապարակի» զրուցակիցը թատրոնի եւ կինոյի դերասանուհի **Անահիտ Քոչարյանն** է:

- Նիկոլ Փաշինյանն արդեն ուղղակիորեն արգելում է խոսել Արցախի, Արցախի պատմության մասին: Նա աշխատանքից հեռացրել է Ցեղասպանության թանգարանի տնօրենին, քանի որ վերջինս հանդգնել է Վենսին Արցախի մասին գիրք նվիրել: Նիկոլ Փաշինյանը պնդում է, որ Հայաստանի ներսում չի կարող երկու արտաքին քաղաքականություն լինել, եւ եթե ինքն ասում է, որ Արցախի հարցը փակված է, ոչեւիցե մեկն իրավունք չունի հակառակը պնդելու կամ գոնե երազելու....

- Այո, Փաշինյանի կարծիքով՝ Հայոց պատմությունը սկսում է իր ժամանակներից՝ 2018 թվականից, եւ իրենով էլ երեւի կվերջանա, եթե այսպես շարունակվի: Արդեն այնքան եմ զզվել այս իրավիճակից, այսքան խոսում ենք, այսքան վրդովվում ենք, բայց արդյունք չկա. այս մարդն ինչ ուզում, անում է, իսկ ովքեր կարող են այս ամենի դեմն առնել, չեն անում ոչ մի կոնկրետ քայլ: Խոսքը մեր այս ընդդիմություն կոչվածի մասին է, նրանք ունեն լծակներ, վստահ եմ, որ մեծ ցանկության դեպքում կարող են ամեն ինչ էլ անել, սակայն մի դեմք են դարձել, մատը մատին չեն ուզում տալ: Ես արդեն անգամ փորձում եմ լուրեր չլսել, որովհետեւ էլ չեմ դիմանում: Մի աղետի, մի կորստի ու ցավի հետ չհաշտված, մի նոր՝ ավելի մեծ ու ցավոտ հարված ենք ստանում:

- Բայց երբեւէ կպատկերացնե՞ք, որ անկախ երկրում կգա այնպիսի ժամանակ, որ պատմություն հիշելը, կարդալը երկրի առաջին դեմքի մակարդակով կարգելվեն:

- Սովետի ժամանակ էլ կար արգելված գրականություն, ինձ թվում է՝ վերադառնում ենք սովետական կարգերին: Մեզ այսօր արգելում են՝ հայրենասիրություն, ազգասիրություն, ազգային ամեն բան արգելված է, ազգային դիմագիծ ունեցող թատրոնները փակվում են, Եկեղեցին, որն ամենաազգային կառույցն է, մեծ հարվածների տակ է, այսինքն՝ մեր երկրի ղեկավարը երկրի առաջին ամենամեծ թշնամին է, այդպես է ստացվում: Ես երբեք չէի պատկերացնի, որ կհասնենք նման կետի: Մարդը, լինելով երկրի ղեկավար, թշնամաբար է վերաբերվում իր ղեկավարած երկրին, ես նման բան չեմ տեսել իմ կյանքում:

- Փաշինյանի պնդմամբ՝ Արցախի մասին խոսելը պատերազմի կոչ է:

- Իսկ ինչո՞ւ, Ալիեւը կարող է ամեն ինչ էլ խոսել, իսկ մենք իրավունք չունե՞նք մեր պատմական հայրենիքի մասին խոսել: Էդ ո՞նց է ստացվում, որ ադրբեջանցիների համար չկա նման վտանգ, ինչ ասես, խոսում են, բայց մենք անգամ մի անմեղ խոսքով վտանգ ենք ստեղծում, լավ, կարելի՞ է այդքան ստրկամիտ լինել եւ փորձել ստրկացնել երկիրն ու ժողովրդին:

- Դե, ասում են՝ բանակը նախկին իշխանությունները թալանել են, դրա համար պետք է խուսափենք պատերազմից:

- Սուտ: Լավ, ենթադրենք՝ էդպես է, ութ տարի իշխանության ես, ստեղծեիր, թե՞ դու մենակ պարգեւավճար ստանալու համար ես: Ամեն ինչ թողնեիր եւ բանակը հզորացնեիր, եթե այդքան թույլ էր, այլ ոչ թե բանակը կազմաքանդեիր:

- Ընտրությունների հետ կապված՝ ի՞նչ կարծիք ունեք:

- Հույսեր ունեմ, որ կլինեն փոփոխություններ: Ես գյումրեցի եմ, վերջերս տեսա, թե ինչպես դիմավորեցին նրան, անկեղծ ասած՝ մի քիչ ընկճվեցի, թեպետ մտածում եմ, որ բեմադրված էր այդ ամենը, սակայն, ամեն դեպքում, այդ տեսարանը տեսնելուց հետո գնացել եմ թատրոն ու երկար ժամանակ ուշքի չէի գալիս: Վարչապետ թագավոր, հորդ գերեզմանին մեռնեմ… Էս խոսքերը, որ լսեցի, վատացա իրոք, անգամ մի քանի հոգի իրավունք չունեին նման խոսքեր շռայլելու մի ղեկավարի, որը երկիրն ավերում է: Չի կարելի լինել ստրկահոգի: Հույս ունեմ, որ ընտրություններով ինչ-որ բան կփոխվի:

- Իշխանություններն ասում են՝ «Գյումրի 2» չի լինելու: Ի՞նչ է դա նշանակում:

- Գյումրիում ոչ մի անօրինական բան տեղի չի ունեցել, պարզապես Գյումրին չի ընտրել իրեն, Գյումրին հաղթել է ՔՊ-ին, եւ նման հայտարարություններով ուզում են ասել՝ այլեւս չի լինելու երկրորդ նման դեպքը: Այժմ Գյումրին չունի քաղաքապետ, ինչպես երկիրը տեր չունի, այնպես էլ Գյումրին քաղաքապետ չունի: Քաղաքապետ չունենալը խիստ զգացվում է Գյումրիում, փողոցները, քաղաքի վիճակը… տեսնել է պետք, Գյումրին անտերության է մատնված:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՆՉՈՒ Է ՆԻԿՈԼՆ ԱՎԵԼԻ ԽՈՐ ԽՈՆԱՐՎՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՌԱՋ

ԹՐԻՓՓ

Նիկոլ Փաշինյանի վերջին ճեպազրույցը կարելի է բնութագրել որպես գետնախոնարհ, ծնկածալուկ խոնարհում Ադրբեջանի եւ Թուրքիայի առաջ: Թվում է, թե խոնարհվելու, հպատակվելու, հնազանդվելու էլ տեղ չկա, բայց նա ամեն անգամ նորանոր ռեկորդներ է սահմանում: Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենին աշխատանքից հեռացնելու պարտադրանքով հպարտանալը՝ միայն նրա համար, որ նա համարձակվել է ԱՄՆ փոխնախագահին «Արցախ» անունով գիրք նվիրել, որը կարող էր զայրույթ առաջացնել Ադրբեջանի նախագահի մոտ, Սահմանադրությունից Անկախության հռչակագիրը հանելու Ադրբեջանին տրված հրապարակային խոստումը, Ադրբեջանին Հայաստանի տարածքով անցնող այլընտրանքային ճանապարհներ առաջարկելը խոսում են այն մասին, որ նույնիսկ նախընտրական իրավիճակը Փաշինյանին չի ստիպում պահպանել արժանապատվության որոշակի նորմեր: Փաշինյանն իր իշխանության գոյությունը հանձնել է Ադրբեջանին, դրա նախագահին: Փաշինյանն իր իշխանության վերարտադրությունը կառուցել է ընդամենը մի բանաձեւի վրա՝ ինքը խաղաղություն է բերել: Բայց այդ խաղաղությունն իր ձեռքում չէ, եթե կամ երբ Ադրբեջանն անգամ պատերազմ չէ, այլ սահմանային մի փոքր ընդհարում կազմակերպի, Փաշինյանի խաղաղության փուչիկը կպայթի, նրա իշխանության թելը միանգամից կկտրվի:

Վիճակն ավելի է սրվել Իրան-ԱՄՆ պատերազմի հետեւանքով. եթե մինչեւ պատերազմը նրա մոտ այնպիսի ընկալում կար, որ ԱՄՆ-ն եւ այդ երկրի նախագահը կարող են ինչ-որ չափով երաշխավորել խաղաղությունը, զսպել Ադրբեջանին, հիմա տեսնում է, որ ԹՐԻՓՓ կոչվող անհեթեթությունը հօդս է ցնդել, ամերիկյան ցանկացած նախագիծ կամ ներդրում ոչ թե անվտանգություն է երաշխավորում, այլ դառնում է Իրանի համար թիրախ, ամերիկացիները նախկինում արած իրենց ներդրումները, իրենց նավթագազային օբյեկտներն ընդունակ չեն պաշտպանել, ուր մնաց որ կարողանան ապագայի հետ կապված նախագծերին տիրություն անել:

Փաշինյանը հասել է այնպիսի հոգեխանգարման, որ ամբողջ օրը նստած մտածում կամ փորձում է կանխագուշակել, թե, օրինակ, Հայաստանում կատարվող որ քայլը Ադրբեջանում ինչպես կարող է ընկալվել, ինչը կարող է զայրույթի կամ դժգոհության պատճառ դառնալ: Նրան թվացել է, որ Ադրբեջանում կարող են իրեն կասկածել միջանցք տրամադրելու հարցը ձգձգելու մեջ, ու որպեսզի փարատի այդ կասկածները, ասում է. «Ես զգում եմ, որ Ադրբեջանում, Թուրքիայում ընտեղց ընկալում կա (խոսքը ճանապարհների ապաշրջափակման մասին է՝ Ա. Բ.), որ Հայաստանը փորձի ձգձգի, ինչի՞ համար Հայաստանը պիտի փորձի ձգձգի, ընդհակառակը՝ մենք ուզում ենք, որ որպե առաջ այդ խնդիրը լուծվի, որովհետեւ դա ֆունդամենտալ կարեւոր հարց ա մեր էսօրվա եւ ապագայի մեր պատկերացրած ճարտարապետության իրականացման տեսակետից»: Իսկ որպեսզի Ադրբեջանի այդ կասկածները վերջնականապես փարատի, շարունակում է. «Ուզում եմ վերահաստատել, որ մենք պատրաստ ենք Կոռնիձորից Երասխով ապահովել Ադրբեջանի արեւմտյան շրջանների եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության կապը: Ինչի՞ ենք մենք այս առաջարկն անում, որովհետեւ հիմա մենք փաստացի Ադրբեջանի երկաթուղուց օգտվում ենք, չենք ուզում, որ մեր օգտվելը լինի միակողմանի, ուզում ենք, որ մենք էլ համապատասխանաբար այդ քայլի դիմաց մեր քայլն անենք, մի անգամ առաջարկել էինք Թուրքիա-Ադրբեջան հաղորդակցությունը, հիմա առաջարկում ենք Կոռնիձորից Երասխով Ադրբեջանի արեւմտյան շրջաններից եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ հակառակ ուղղությամբ կապն ապահովել: Մանավանդ որ Իրանի Իսլամական Հանրապետությունում տեղի ունեցող իրադարձությունների պայմաններում ոնց որ թե հարավով այդ կապի հետ կապված խնդիրներ կան: Ուզում եմ ընդգծել, թե ինչու եմ այս երթուղին առաջարկում, որովհետեւ ուրիշ երթուղի չկա, պատրաստ ճանապարհ չկա: Եթե հարմար դիտվի, նաեւ Իջեւան-Ղազախ հատվածով էլ կարող ենք ապահովել»:

Տեսեք. մի անգամ առաջարկել է Հայաստանի տարածքով ապահովել Թուրքիայի եւ Ադրբեջանի կապը՝ հրաժարվել են, արդեն հարյուրերորդ անգամ առաջարկում է Հայաստանի տարածքով ապահովել Ադրբեջանի եւ Նախիջեւանի կապը, դարձյալ ոչ միայն հրաժարվում, այլեւ անուշադրության են մատնում: Ինչո՞ւ, որովհետեւ Ադրբեջանին եւ Թուրքիային ցամաքային կապ պետք չէ, նրանք դա ունեն Վրաստանի տարածքով, Ադրբեջանին Նախիջեւանի հետ ցամաքային կապ պետք չէ, իրենք դա ունեն Իրանի տարածքով, նրանց միջանցք է պետք՝ Հայաստանից տարածք: Փաշինյանը սարսափով մտածում է, որ Ադրբեջանը եւ Թուրքիան կարող են Իրանում տեղի ունեցող պատերազմը եւ անկայունությունն օգտագործել եւ գրավել Մեղրին, եւ այդ դեպքում իրեն ո՛չ պարոն Թրամփը կօգնի, ո՛չ Մակրոնը եւ ո՛չ էլ որեւէ մեկը: Փաշինյանը Մեղրիի մասին չի մտածում, ինքն իր իշխանության կորստի մասին է մտածում, իր անձնական անվտանգության մասին է մտածում, որ չի կարողանա մարդկանց խաբել, թե խաղաղություն եմ բերել, ինձ իշխանություն տվեք, դուք էլ հանգիստ ապրեք: Դրա համար է սողում Ալիեւի ոտքերի տակ, որ հանկարծ իրեն չտրորեն, իշխանությունից չզրկեն:

Նիկոլն իր կյանքն ու ճակատագիրը հանձնել է Ալիեւի ձեռքն ու հիմա նրանից կյանքի, ապրելու իրավունք է աղերսում, դրա դիմաց խոստանալով ընտրություններից հետո նրան հանձնել ամբողջ Հայաստանը: Ալիեւը ծանր ընտրության առաջ է. իսկ եթե, չնայած իր բարեգթությանը, Նիկոլը չկարողանա մնալ իշխանության, եթե ինքը նրան գթա եւ չոչնչացնի, կարող է իր փոխարեն դա անել հայ ժողովուրդը:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՄԻ ԲԱՌ Է ԲԵԻՆԸ ՄՏՑՐԵԼ, ԲԱՅՑ ԴՐԱ ԻՄԱՍՏՆ ԷԼ ՉԻ ՀԱՍԿԱՆՈՒՄ

ԹՊ-ի ապաքաղաքական ղեկավարը կառավարության վերջին նիստից հետո իր ասուլիսում հերթական անգամ ցույց տվեց, որ ինքը, ըստ էության, քաղաքականությունից հեռու մարդ է: Դուք, իհարկե, կարող եք սա ընդունել որպես զավեշտ, բայց դա իրողություն է, մախաթ, որ ոչ մի կերպ պարկում չես թաքցնի: Մուննաթ է գալիս լրագրողների վրա, թե բա՝ սա ի՞նչ է, որ խաղաղություն չէ, այդ որտե՞ղ են կրակում, այդ որտե՞ղ է զինվոր զոհվում, որտե՞ղ են ռումբեր պայթում, որ ես տեղյակ չեմ, իսկ դուք տեղյակ եք: Բա՝ եթե ռումբեր չեն պայթում, կրակոց չկա, ի՞նչ է դա, եթե ոչ խաղաղություն: Մարդն ուղղակի խոստովանում է, որ չգիտի՝ ինչ է խաղաղությունը: Ըստ նրա, փաստորեն, մոտ 10 օր առաջ ԱՄՆ-ի, Իսրայելի եւ Իրանի միջեւ խաղաղություն էր, որովհետեւ Իրանում ռումբեր չէին պայթում, երեխաներ չէին զոհվում, ամերիկյան եւ իսրայելական ռազմաբազաները հօդս չէին ցնդում, Հորմուզի նեղուցում կամ բաց ծովում ավիակիրներ ու տանկերներ չէին ոչնչացվում: Նույնը ամերիկա-իսրայելա-իրանական 12-օրյա պատերազմի մասին կարելի է ասել: Ըստ ՀՀ վարչապետի՝ այդ երկրների միջեւ խաղաղություն էր տիրում, քանի դեռ 12-օրյա հրթիռակոծությունները չէին սկսվել: Բայց այդպես է արդյոք…

Այս պարզունակ սխալը գալիս է հենց այն բանից, որ ՀՀ վարչապետն ապաքաղաքականացված տարր է եւ, ինչպես բոլոր ապաքաղաքականացված տարրերը, մի բառ է բեինը մտցրել՝ խաղաղություն, ու ամեն տեղ խաղաղությունից է խոսում, չհասկանալով ո՛չ դրա բուն իմաստը, ո՛չ էլ այդ երեւույթի կառուցվածքն ու բովանդակությունը: Ի դեպ, Թրամփը եւ Ալիեւն էլ են հայտարարում, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղություն է: Նրանց եւ ՀՀ վարչապետի հայտարարությունները, սակայն, տարբեր են իրարից: Եթե Թրամփն ու Ալիեւն իրենց վարած քաղաքականությունն են այդ բառով սպասարկում, ապա ՀՀ ապաքաղաքական վարչապետն անկեղծորեն հավատում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաստատված խաղաղությանը:

Իրական խաղաղությունը բոլորովին այլ բան է: Կարո՞ղ է, օրինակ, որեւէ մեկը պատերազմ հրահրել Ֆրանսիայի եւ Շվեյցարիայի միջեւ, Իտալիայի եւ Իսպանիայի միջեւ, Դանիայի եւ ԱՄՆ-ի միջեւ: Ոչ, որովհետեւ այդ երկրների միջեւ կարգավորված են բոլոր, կրկնում եմ՝ բոլոր այն խնդիրները, որոնք որեւէ պահի այս կամ այն կերպ կարող են պատերազմի պատճառ դառնալ: Նույնիսկ ԱՄՆ նախագահի պահանջը՝ Դանիայի Թագավորության պրոտեկտորատ Գրենլանդիան դարձնել ԱՄՆ-ի նահանգ, պարզվեց՝ չհանգեցրեց ԱՄՆ-ի եւ Դանիայի միջեւ պատերազմի: Ասել է, թե իրական խաղաղությունը ոչ թե միայն բառ է, այլ՝ լուծված եւ կարգավորված խնդիրների մի ամբողջություն, որը չի խախտվում անգամ, երբ երկրների միջեւ ինչ-ինչ հարցեր են ծագում: Հակառակ պարագայում խաղաղությունն ընդամենը պատերազմների միջեւ ընկած մի ժամանակահատված է, որի ընթացքում թնդանոթները պարզապես հանգստանում են:

Հիմա դառնանք ու մեր «խաղաղարարին» հարցնենք՝ դու այդ ի՞նչ խնդիրներ ես լուծել ու կարգավորել Ադրբեջանի հետ, որ արդեն մուննաթ ես գալիս մեզ վրա ու ասում, թե Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղություն է, որովհետեւ չեն կրակում: Այսօր պետք չէ՝ չեն կրակում, վաղը պետք լինի՝ կկրակեն: Ու կստացվի, որ քո «խաղաղությունն» ընդամենը փուչիկ է՝ օդում նկարված, օդից թեթեւ մի բան:

Ինչի՞ մասին է Կիրանցի պատը: Միայն թե չասեք՝ խաղաղության: ՀՀ օկուպացված տարածքները, հայ ռազմագերիները, Սահմանադրությունից Անկախության հռչակագրին հղումը հեռացնելը, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին խոնարհելու փորձերը, Հայոց ցեղասպանությունն ուրանալն ու մյուս բաներն ինչի՞ մասին են աղաղակում, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղությա՞ն: Ուրեմն թքած այն «խաղաղության» վրա, որ ժամանակավորապես «կա», «գոյություն» ունի իմ ինքնության հաշվին, իմ երկրի հաշվին, իմ հայրենիքի հաշվին, իմ ժողովրդի հաշվին: Եթե ՀՀ պետական պաշտոնյան այլեւս իրավունք չունի Արցախի անունը տալու, որովհետեւ դա, հասկանում ես, տանում է պատերազմի, նշանակում է՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ոչ մի հարց էլ կարգավորված չէ: Ճիշտ նույն տրամաբանությամբ էլ կարելի է պնդել, որ քանի դեռ ՀՀ Սահմանադրությունից հանված է Անկախության հռչակագրին հղումը, Ադրբեջանի հետ խաղաղություն չկա, քանի դեռ մինչեւ վերջին անկլավը Ադրբեջանին չեք զիջել, խաղաղություն չկա… Մնացածը, թե մենք անշեղորեն գնում ենք 100 տարով խաղաղություն ապահովելու ճանապարհով, ընդամենը ճամարտակություն է, որովհետեւ նույնիսկ 100 տարին բավական չէ Ադրբեջանի բոլոր պահանջները կատարելու համար:



Դու, պարոն ՀՀ վարչապետ, ապաքաղաքականության տիպար ես, գործիք՝ քաղաքականությամբ զբաղվող Ալիեւի ձեռքին, որը նա թանկ է գնահատում եւ պատրաստ է ամեն ինչ անել, որ դու եւ քո ապաքաղաքական խմբակը մնաք Հայաստանի ղեկին: Էլ ճ՞րբ Ալիեւին բախտ կվիճակվի ձեզ նմանների հետ Հայաստանի հարցերը լուծել եւ դա ներկայացնել «խաղաղության» մասին հենց ձեր անմեղսունակ խոսույթով:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆ Ի ՉԻՔ ԴԱՐՁՐԵՑ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԲՈԼՈՐ ՀՈՒՅՍԵՐԸ

Նիկոլ Փաշինյանը Եվրախորհրդարանում հերթական անգամ թիրախավորեց հայ եկեղեցին:

Հայ հոգեւորականներին նա պիտակավորեց որպես ԽՍՀՄ գործակալներ, որոնք, այսպես կոչված, պատերազմի կուսակցության մասն են կազմում: Քաղաքագետ **Ստեփան Դանիելյանը** «Հրապարակի» հետ զրույցում նկատում է. «Սա ուղղակի խեղդվողի ելույթ էր, որը խեղդվելուց առաջ ձեռքերը փորձում է հնարավոր ամեն տեղ գցել: Մարդ, որը խեղդվում է, սկսում է ձեռքերով անկանոն շարժումներ անել, փորձում է մի բան գտնել, որից կբռնվի: Սա էր ամբողջ իմաստը, ինքն արդեն հասկացել է, որ արդար ընտրությունների միջոցով վերընտրվելու հնարավորություն չունի, եւ փորձում է Արեւմուտքից՝ Եվրոպայից, օգնություն ստանալ: Թե Եվրոպան ինչպես կարող է իրեն օգնել, ես չեմ հասկանում, Եվրոպան Հայաստանում այդքան լծակներ չունի, որ իրեն օգնի: Իմաստը հետեւյալն էր. ասում էր՝ Արցախից ես հրաժարվել եմ: Արցախից հրաժարվելը նշանակում է Ռուսաստանը դուրս մղել տարածաշրջանից եւ Հայաստանից, գլխավոր միտքը տարածաշրջանից դուրս մղելն է, որ ԹՐԻՓՓ-ը, այնուամենայնիվ, չի մեռել, պետք է, կարելի է փորձել օգտագործել, ես էլ՝ ձեզ օգնական այդ գործում: Իսկ Իրանի պատերազմով, եթե Իրանը չպարտվի, ԹՐԻՓՓ-ը կորցնում է իր նշանակությունը: Եթե Իրանը պարտվի, նույնպես կորցնում է իր նշանակությունը. երկու դեպքում էլ կորցնում է: Պարտվելու դեպքում արդեն Իրանը կինտեգրվի Արեւմուտքին, եւ Իրանի չպարտվելու դեպքում արդեն Իրանը թույլ չի տա, որ ԹՐԻՓՓ գոյություն ունենա»:

Ինչ վերաբերում է Եկեղեցուն, ապա Փաշինյանն ամբողջ աշխարհում շատ է վարկաբեկվել Եկեղեցու հարցում, ինքը դա փորձում է արդարացնել՝ ասելով, թե Եկեղեցի՝ նշանակում է լրտեսներ, Ռուսաստանի ենթակա կառույցներ, ինքն ի՞նչ վատ բան է արել՝ Եկեղեցու դեմ է պայքարել, Արեւմուտքի ուզածն է արել: «Արցախից հրաժարվում է, ԹՐԻՓՓ-ը փորձենք վերակենդանացնել, եկեղեցում ռուսական գործակալներ են, խնդրում եմ՝ եկեք, ինձ օգնեք, որ ես վերարտադրվեմ: Սա էր Փաշինյանի ամբողջ ելույթի իմաստը»,- ասաց քաղաքագետը: Եվրոպացիները կկարողանան օգնել Փաշինյանին: Դանիելյանը հիշեց Քիսինջերի հայտնի խոսքը. ««Եվրոպայի հեռախոսի համարն ո՞վ կարող է տալ, որ զանգենք՝ իրենց կարծիքն իմանանք»: Եվրամիությունը բազմաթիվ երկրներից բաղկացած կառույց է, որոնց մեջ հակասությունները խորացել են: Նույնիսկ Ուկրաինային օգնություն չեն կարողանում տրամադրել՝ Հունգարիայի, Սլովակիայի դիրքորոշման պատճառով: Տարբեր երկրներում ընտրություններ են լինելու՝ տեղական եւ այլն, եվրոպական կառույցի ապագան հարցականի տակ է: Ինչպես Մակրոնն էր ասում, եթե այսպես շարունակվի, հինգ տարի հետո կարող է Եվրոպա չլինել, դա Մակրոնն է ասում՝ ես չեմ ասում: Հիմա այդ Եվրոպան, որ տնտեսական ճգնաժամի մեջ է, էներգակիրների խնդիր ունի, իրար մեջ բազմաթիվ հակասություններ ունեն, Հայաստանն արդեն տասներորդ պլան է անցել, Եվրոպան ինչպե՞ս պետք է օգնի Նիկոլ Փաշինյանին՝ վերարտադրվելու առումով: Ոչ մի բանով»:

Հարցին, թե արդյոք Փաշինյանը՝ ինքն էլ, գիտակցելով այդ բոլոր հնարավոր զարգացումները, կանցնի՞ նույն հոգեւորականների դեմ չափազանց կոշտ, բռնի միջոցների, Դանիելյանը կարծիք է հայտնում, որ հոգեւորականության դեմ Փաշինյանն այլեւս ոչ մի քայլ չի կարող անել. «Ինքն այդ դաշտում արդեն պարտվել է: Նա ընդամենը փորձում է արդարանալ, իսկ այն տեսակետը, որ ինքը կարող է ընտրությունները կեղծել, մարդիկ չեն հասկանում, որ ընտրությունները կեղծելը չափազանց դժվար գործ է: Պետք է ունենալ թիմ, ինչ-որ գաղափարների հավատացող մարդիկ, թե հանուն ինչի են կեղծվում ընտրությունները, ընտրությունների կեղծման մեխեզերներ են պետք, տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությունն է պետք, ինքն այդ ամեն ինչը շուտով փուլ առ փուլ կորցնելու է, որովհետեւ քաղաքական ապագա չունի: Իր սարքած միակ գաղափարախոսությունը, որ Հայաստանը տանում է խաղաղության, խաղաղության խաչմերուկ է լինելու, Արեւմուտքը գալու է՝ մեզ փրկելու է, այդ ամեն ինչը փլուզվում է իրանական պատերազմով»:

Հարցին, թե, ի վերջո, Փաշինյանը Եկեղեցուն դիտարկում էր որպես նախընտրական վտանգ, Դանիելյանն արձագանքեց, որ բոլոր սոցհարցումները ցույց են տալիս, որ Եկեղեցու դեմ սկսած պայքարի հետեւանքով Եկեղեցու դիրքերը միայն ուժեղացել են, հանրային վստահությունը մեծացել է, իսկ գործող վարչապետի մոտ հակառակ արդյունքներն են գրանցվել: Եվրախորհրդարանում Փաշինյանը մեկ այլ, շատերի բնորոշմամբ՝ անընդունելի ու հակահայկական հայտարարությամբ է հանդես եկել՝ նոր սահմանադրության մեջ Անկախության հռչակագիր չի լինելու: «Իսկ Նիկոլ Փաշինյանն ո՞վ է, որ որոշի՝ Սահմանադրությունն ինչպիսին է լինելու, ինքը ոչ մի բան է, Սահմանադրության հարցը դրվում է հանրաքվեի, քաղաքացիներն են որոշելու: Ո՞վ է Փաշինյանը, որ ասի, թե Սահմանադրության մեջ ինչ է լինելու, ինչ չի լինելու: Նա, որպես վարչապետ, կարող է առաջարկել սահմանադրության որեւէ տարբերակ եւ երբ ասում է, որ նոր Սահմանադրության մեջ այս հոդվածը չի լինելու, իր հերթական քրեական գործի հոդվածն է, որ ինքն իր վրա նման պատասխանատվություն է վերցրել, թե այս սահմանադրության մեջ ինչ է գրվելու»,- նկատում է քաղաքագետը:

Իսկ հայտարարության պատճառն այն է, որ ընտրություններից առաջ Փաշինյանը ցանկանում է Ադրբեջանի աջակցությունը ստանալ եւ միայն դրա համար է հայտարարություն արել: Արցախցիներին փախստական հայտարարելն էլ է նույն նպատակը հետապնդում՝ վստահ է քաղաքագետը. «Ուզում է նույն Ադրբեջանի դուրը գալ, որպեսզի ընտրությունների ժամանակ Ադրբեջանի աջակցությունը ստանա. ընդամենը դա է նշանակում»: Արդյո՞ք սա նշանակում է, որ Փաշինյանն ընտրություններից առաջ մնացել է առանց երաշխավորների եւ հերթական առուծախի առարկան է առաջարկում ադրբեջանցիներին ու եվրոպացիներին: Դանիելյանը նկատեց, որ Փաշինյանն ադրբեջանցիներին պետք է, իսկ եվրոպացիներին՝ այլեւս ոչ. «Հարց է, թե եվրոպացիներն ինչ խնդիր ունեն այստեղ, աշխարհի այս իրավիճակում: Իսկ Ադրբեջանին ինքը պետք է եւ փորձում է ինչ-որ օգնություն ստանալ»:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ԻՆՉՊԻՍԻՆ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ»

Հայաստանը պահպանում է բալանսավորված դիրք թե՛ որպես ներդրող եւ թե՛ որպես ներդրումներ ստացող երկիր՝ կարծում է Եվրասիական զարգացման բանկը: Բանկի ներկայացրած «Եվրասիական ռեգիոնի ներդրումային դինամիկան՝ արդյունքներ, թրենդներ» օնլայն զեկույցում ասվում է, որ Հայաստանի ելքային ուղղակի արտասահմանյան ներդրումները կազմել են 1,4 միլիարդ դոլար, որը 23 թվականի համեմատությամբ ավելացել է 15 տոկոսով: Մուտքային ուղղակի արտասահմանյան ներդրումների ծավալը կազմում է 4,9 միլիարդ դոլար, աճը՝ 25 տոկոս: Ներդրումների մեջ գերակշռում են ռուսական ներդրումները՝ 86 տոկոս: Սակայն վերջին 1,5 տարվա ներդրումային աճի 2/3-ն ապահովել են վրացական ներդրումները, որոնք կատարվել են ֆինանսական ոլորտում:

2016-25 թթ. Հայաստանի ներդրումներն այլ երկրներում ավելացել են 10 անգամ՝ կազմելով 138,6 միլիոն դոլարից մինչեւ 1,38 միլիարդ դոլար: Առանցքային նշանակություն են ունեցել 23 թվականին կնքված խոշոր գործարքները, որոնց շարքում են Balchug Capital-ի կողմից «Մետրոպոլիս» առեւտրի կենտրոնի եւ Pulkovo Sky մոսկովյան համալիրի ձեռքբերումը, որի ընդհանուր արժեքը գերազանցում է 750 միլիոն դոլարը: Անցյալ տարվա առաջին կեսից Հայաստանը 11 ներդրումային ծրագիր է իրականացնում եվրասիական ռեգիոնում, որոնց ավելի քան կեսը՝ 760 միլիոն դոլարը, առեւտրի ոլորտում: Նոր ուղղություններից Revery Group ընկերության կողմից Ղազախստանում Burger King-ի ձեռքբերումն է, որի մոտավոր արժեքը 110 միլիոն դոլար է, ինչպես նաեւ՝ Վրաստանում «Գրանդ Հոլդինգի»՝ ծխախոտի արտադրությունում ունեցած մասնաբաժնի ավելացումը՝ 2016-ին 6 միլիոն դոլարից մինչեւ 2025-ին՝ 147 միլիոն դոլար: Հայաստանը նաեւ եվրասիական ռեգիոնում համարվում է կապիտալի ներգրավող երկիր: Ռեգիոնի կապիտալ ներգրավումների 10,2 տոկոսը բաժին է ընկնում Հայաստանին, որը կազմում է 4,9 միլիարդ դոլար: 86 տոկոսը ռուսական կապիտալն է: Վրաստանը դարձել է Հայաստանում խոշոր ներդրողներից մեկն այն բանից հետո, երբ 24 թվականին Bank of Georgia-ն ձեռք բերեց Ameriabank-ը: Վրացական ներդրումները Հայաստանում կազմում են 674 միլիոն դոլար:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մարզպետարանների պարգեւատրման չափը թաքցնում են

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին տեղեկատվական հարցում եմ արել, թե 2025 թվականին որքան է կազմել մարզպետների աշխատակազմերի պարգեւատրման գումարը, որքան գումար է նախատեսված 2026 թվականի համար: ՏԿԵ նախարարի տեղակալ Ա. Դարբինյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «Բյուջետային կարգավորումների համաձայն՝ ՀՀ մարզպետների աշխատակազմերը հանդիսանում են բյուջետային ծախսերի ինչպես գլխավոր կարգադրիչներ,այնպես էլ ստորադաս կարգադրիչներ եւ իրենց բյուջետային լիազորություններն իրականացնում են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով, հետեւաբար, իրենց պարգեւատրման ֆոնդի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար նպատակահարմար է դիմել համապատասխան մարզպետի աշխատակազմ»: Նախկին մարզպետարանները, որոնք հիմա կոչվում են մարզպետի աշխատակազմեր, փաստորեն, անմիջական կարգով ընդամենը 2 ոլորտ են կառավարում՝ տվյալ մարզի հանրակրթական դպրոցները (բացի ավագ դպրոցները եւ վարժարանները) եւ գյուղական բուժհիմնարկները: Այդ 2 ոլորտը կառավարելու համար մարզպետի ուռճացած աշխատակազմեր են պահում, մեծ թվով պաշտոնյաների բարձր աշխատավարձեր ու մեծ պարգեւավճարներ տալիս: Ընդ որում, մարզպետների աշխատակազմերը հանրակրթական դպրոցները եւ գյուղական բուժհիմնարկները ղեկավարում են համապատասխան նախարարությունների՝ ԿԳՄՍ եւ առողջապահության նախարարությունների հետ համատեղ, տեղի է ունենում կառավարման գործառույթների կրկնություն: Տարածքային կառավարման նախարարությունն էլ, որի տարածքային ստորաբաժանումներն են մարզպետների աշխատակազմերը, հրաժարվել է մարզպետների աշխատակազմերի պարգեւատրման ֆոնդի մասին մեզ տեղեկատվություն տրամադրել՝ առաջարկելով բոլոր մարզպետարաններից առանձին-առանձին տեղեկատվություն ստանալ:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՏՄԱԲԱՆԻՆ

ԵԹԵ ՉԵՍ ԱՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ՝ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻ ԿԱՄ ՎԱՐՉԱՊԵՏԻ, ԱՐԱ ԳՈՆԵ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

Պատմաբան, ակադեմիկոս **Աշոտ Մելքոնյանի** հետ զրուցել ենք Ադրբեջանի ագրեսիվ ու պահանջատիրական եւ Հայաստանի պարտվողական ու զիջողական քաղաքականության, մեր շուրջ օր-օրի թանձրացող գոյաբանական սպառնալիքների մասին:

- Ադրբեջանը գրեթե ամենօրյա հաճախականությամբ, հատկապես Արցախը բռնազավթելուց եւ հայաթափելուց հետո, որպես ռազմավարական ծրագիր՝ հայտարարում է 300 կամ 500 հազար ադրբեջանցիների վերադարձն «Արեւմտյան Ադրբեջան»՝ ՀՀ ինքնիշխան տարածք: Մեր իշխանությունները լուռ են՝ չեն հակադարձում: Ադրբեջանի տարածքում հայեր չե՞ն ապրել, վերադարձի խնդիր մենք չունե՞նք:

- Խորհրդային Ադրբեջանի կազմում հայությունը գրեթե միշտ կազմել է բնակչության առնվազն 12 տոկոսը՝ որպես երկրորդ էթնոս, ընդհանուր թաթարների համեմատությամբ: 1926 թ. ԽՍՀՄ առաջին մարդահամարի տվյալներով՝ հայերի թիվն Ադրբեջանում կազմել է 282 հազար, ներառյալ ԼՂԻՄ-ի հայությունը՝ 111 հազար 694: Իսկ 1989թ. ԽՍՀՄ վերջին մարդահամարով՝ հայերի թիվը 475 հազար էր, որից 140 հազարը Լեռնային Ղարաբաղի տարածքում էր: Այսինքն, մոտ կես միլիոն հայ բնակչություն կար Ադրբեջանի կազմում, որի մասին այսօր մենք ոչինչ չենք խոսում: Վերցնենք հակառակ պատկերը. 1989թ. մարդահամարով՝ երկու տվյալ կա. 84 հազար եւ 89 հազար ադրբեջանցի, որ ապրում էր Հայաստանում: Ինչո՞ւ 5 հազարի տարբերություն կա: Երբեմն մուսուլման քրդերին մտցնում էին ադրբեջանցիների մեջ, ինչպես մտցրին Ամասիայի շրջանի օղուզ օսմանյան թուրքերին: Եվ հիմա, ժողովրդական խոսքով ասած, սելը ճռռալու փոխարեն սելվորն է ճռռում: Մենք, որ Ադրբեջանական ԽՍՀ տարածքում մինչեւ 1991թ. ունեինք մոտ կես միլիոն հայություն, ոչ մի ծպտուն չենք հանում, իսկ Ադրբեջանը գիշեր-ցերեկ խոսում է այն մասին, որ իբր 300 հազար ադրբեջանցի է եղել մեր տարածքում, եւ նրանց նկատմամբ իբր ցեղասպանություն է իրականացվել, եւ իրենք պետք է վերադառնան իրենց հայրենի վաթանը, ինչպես իրենք են ասում: Եթե նրանք առաջ զուտ հրապարակախոսական, հետո «գիտական» մակարդակով սկսեցին խոսել «Արեւմտյան Ադրբեջանի» մասին, հիմա արդեն պետական մակարդակով, առաջին դեմքի մակարդակով են խոսում վերադարձի մասին:

- Ինչո՞ւ: Մեր «էստի համեցեք» զիջողական քաղաքականությո՞ւնն է Ադրբեջանին առիթ տալիս՝ նման պարտադրանքով նախ՝ խոսելու եւ հետո՝ գործելու:

- Մեր «խաղաղության խաչմերուկ» ծրագրի առաջադրման պարագայում, երբ Ադրբեջանն անընդհատ ճնշումներ է գործադրում մեզ վրա, եւ մենք ընկրկում ենք պետականորեն, նրանք եկան այն եզրակացության, թե ի՞նչ կարիք կա զոհեր տալու, ինչպես 2020-23թթ. պատերազմի ժամանակ, երբ կարելի է դիվանագիտական ճնշման արդյունքում հասնել հաջողության եւ «Զանգեզուրի միջանցք» բացել: Նաեւ՝ խոսել այն մասին, որ Սեւանա լճի առնվազն արեւելյան ափն Ադրբեջանի մաս է կազմում, հետո անցան ավելի առաջ՝ ամբողջ Վայքին ու Սյունիքին, եւ արդեն հասել են Երեւանին: Ինչպես տեսնում ենք, պատմագիտական կեղծիքը դարձել է հայեցակարգ Ադրբեջանի համար, ինչի հետ կապված՝ մենք համարժեք հակահարված չենք տալիս: Ոչ միայն գիշեր-ցերեկ պատմաբանները պետք է խոսեն դրա մասին, այլեւ պիտի խոսեն պետական մակարդակով: Որքանո՞վ է ընդունելի մեր կողմից այն հանգամանքը, որ, այսպես կոչված, 300-500 հազար ադրբեջանցիների վերադարձից հրաժարվելու դիմաց մենք էլ հրաժարվում ենք արցախցիների վերադարձի իրավունքից: Բայց մենք դրա իրավունքը չունենք: Արցախն անկախ հանրապետություն էր, անգամ եթե այդ հանգամանքը հաշվի չառնենք, այն խորհրդային տարիներին պետական կազմավորում էր Ադրբեջանի կազմում, ինքնավարություն ուներ:

- Մենք ոչ միայն չենք հակադարձում, որ հայերն էլ կարող են վերադառնալ Ադրբեջան, այլեւ Արցախի էթնիկ զտման իրողությունն ենք կոծկում: Այսպես հեշտ ու անխռով մոռացա՞նք Արցախը:

- Եթե ադրբեջանցիներն այսօր իրենց վերադարձի հարցն են բարձրացնում՝ այն դեպքում, երբ Խորհրդային Հայաստանի տարածքում իրենք որեւէ ինքնավարության նշույլ չունեին, մենք ունեինք երկու ինքնավարություն Ադրբեջանի կազմում. մեկը Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունն էր, մյուսը՝ ԼՂԻՄ-ը, որ պետական կազմավորում էր: Մենք ադրբեջանցիների համեմատությամբ ունենք առավելություն այն տեսանկյունից, որ խորհրդային Ադրբեջանի կազմում պետականություն ունեինք: Այսինքն, լուծարվել է մեր պետականությունը, մեզ հայրենազրկել են՝ ենթարկելով ցեղասպանության, որն ամբողջովին տեղավորվում է 1948թ. ՄԱԿ-ի ընդունած ցեղասպանության բանաձեւի կետերի մեջ: Մենք ոչ միայն պետք է դնենք պարզ վերադարձի խնդիրը, այլ նաեւ՝ մեր կորցրած պետականության: Մեր պարագայում նաեւ պետական կազմավորման խնդիր կա: Անընդհատ խոսում են միայն, որ Արցախի բնակչության վերադարձի խնդիր պետք է դրվի: Ոչ, Արցախի պետականության հարցն էլ պետք է դրվի:

- Թրքալեզու ցեղերը ե՞րբ են հայտնվել մեր տարածաշրջանում: Մեր հասարակության որոշ շերտեր անտեղյակությունից մոլորության մեջ են, եւ զգալի մասն էլ թրքական քարոզչության սպառողն է դարձել:

- Ամեն մի երիտասարդ ժողովուրդ, տվյալ դեպքում՝ թյուրքալեզու ժողովուրդներից ներկայիս ադրբեջանցիները, այսպես կոչված, իրենց բնիկությունն այստեղ հաստատելու համար պետք է դիմեին կեղծարարության: Եվ դա սկսվեց 20-րդ դարի 50-60-ական թվականներին: Դրա ակունքներում ծագումով հրեա Միլերն էր՝ Ադրբեջանից, որն էլ էստաֆետը փոխանցեց Զիա Բունիաթովին: Իմաստը հետեւյալն էր, որ ադրբեջանցիները, որպես էթնոս, ի սկզբանե այս տարածաշրջանում ապրել են: Որպեսզի այդ կեղծ հայեցակարգը նրանք կարողանային տեղից շարժել եւ դարձնել պաշտոնական, սկսեցին տարածաշրջանի բոլոր հնագույն ժողովուրդների պատմությունը յուրացնել: Մենք միշտ խոսում ենք հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության յուրացման մասին, բայց բոլոր ժողովուրդների պատմամշակութային ժառանգությունը յուրացնելու ճանապարհով են գնացել ադրբեջանցիները: Քանի որ որպես էթնոս, ժողովուրդ՝ նրանք ձեւավորվել են 20-րդ դարի ընթացքում եւ «ադրբեջանցի» անվան տակ հանդես են եկել միայն 1936թ. դեկտեմբերի 5-ից՝ ստալինյան սահմանադրությունից հետո: Տարածաշրջանն ի սկզբանե եղել է արիական-հնդեվրոպական ծագման, ես՝ որպես պատմական ժողովրդագրության մասնագետ, ուսումնասիրել եմ եւ համոզվել, որ, հայ ժողովրդի էթնոգենեզի ծագումնաբանության գործընթացից սկսած, տարածաշրջանն էթնիկապես եղել է զտարյուն մոնոէթնիկ: Սա հայկական լեռնաշխարհին բնորոշ երեւույթ է եղել: Եթե շատերը պնդում են, թե տարբեր էթնիկ խմբերի ձուլման արդյունքում է հայ ժողովուրդը ձեւավորվել, իրականության մեջ այդպես չէ: Մինչեւ ընդհուպ 16-րդ դարը հայկական լեռնաշխարհը գերազանցապես եղել է էթնիկապես միատարր՝ հայկական ծագում ունեցող: Էթնիկ դիմախեղումն սկսվել է 16-18-րդ դդ. թուրք-պարսկական երկարատեւ պատերազմների հետեւանքով, երբ տարածաշրջանում հայտնվեցին թյուրքական նորանոր ցեղեր: Եվ հետագայի, այսպես կոչված, ադրբեջանցիները ձեւավորվեցին այդ էթնիկ խառը սինթեզի արդյունքում, բայց չունեին ինքնանվանում անգամ: Նրանց որպեսզի զանազանեին մյուս ժողովուրդներից, ուղղակի իսլամ էին անվանում: Խորհրդային տարիներին, երբ արտասահմանում ադրբեջանցին հանդիպում էր ադրբեջանցու, ասում էր՝ մուսուլման սը՞ն՝ դու մուսուլմա՞ն ես: Այսինքն, «մուսուլման» ասվածն ընկալվում էր որպես էթնիկ հանրույթ: Եվ պատահական չէ, որ 1921թ. հուլիսի 5-ի քաղբյուրոյի այդ չարաբաստիկ որոշումով, երբ Արցախը միացվեց Ադրբեջանին, այնտեղ նշված էր. «Ելնելով հայերի եւ մուսուլմանների միջեւ հաշտություն հաստատելու անհրաժեշտությունից...», չի ասում՝ ադրբեջանցիների: Հետագայում «ադրբեջանցի էթնոս» անվան տակ հանդես եկող հանրույթն իր մեջ սկսեց ներառել քրդերի զգալի մասը եւ օսմանյան թուրքերի՝ օղուզների: Մի օրինակ բերեմ. Ամասիայի շրջանում ապրող ադրբեջանցիներն իրականում սյունի օղուզ թուրքեր էին՝ օսմանյան թուրքեր, որոնց եւս պարտադրեցին «ադրբեջանցի էթնիկ» անվանումը: Այդ մուսուլման հավաքական կրոնական անվան տակ աստիճանաբար սկսեց ձեւավորվել մի երիտասարդ էթնոս, որը փնտրտուքի մեջ էր՝ իր ինքնության առումով: Ինքը չգիտեր, թե ինչ է, եւ մինչեւ հիմա Ադրբեջանում վիճում են դրա շուրջ:

- Գոնե, հանուն արժանապատվության եւ ինքնահարգանքի, ինչպե՞ս մեզ դրսեւորենք՝ եւ որպես պետություն, եւ որպես հասարակություն:

- Այն, որ այս բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում պետք է դրսեւորել զգուշավորություն, համաձայն եմ, բայց ո՛չ վախկոտություն: Զգուշավորություն, որը վախկոտության մակարդակի է, որ ստիպում է ճշմարտությունը թաքցնել, ասելիքդ չասել, միմիայն բումերանգի նման կաշխատի քո դեմ: Գոնե համաշխարհային հանրությանը ներկայացրու իրականությունը: Եթե դա չես անում պետական մակարդակով, պետական խողովակներով՝ արտգործնախարարության կամ վարչապետի, արա գոնե գիտնականների մակարդակով: Մեզ համար ստեղծեք հնարավորություններ՝ քարոզչական իմաստով, որ ճշմարտությունը հասցնենք աշխարհին: Քարոզչական դաշտում մենք պարտություն ենք կրում: Պետական աջակցություն է պետք գիտնականին՝ գոնե քո պատմական ճշմարտությունը մարդկանց հասցնելու համար: Յուրաքանչյուր պատերազմ եւ հաղթանակ, բնականաբար, տեղի են ունենում այն դեպքում, երբ դու գաղափարապես այն նախապատրաստում ես եւ ճիշտ ուղղությամբ ես տանում: Իսկ մենք այդպես չենք անում: Անընդհատ խոսել խաղաղության խաչմերուկի մասին, երբ ամբողջ Արեւելքը կրակների մեջ է, դառնում է արդեն ծիծաղելի: Դրա համար էլ պիտի ճշմարտությունն ասել մինչեւ վերջ, եթե ոչ պետական մակարդակով, գոնե գիտնականների մակարդակով: Համենայնդեպս, ես չեմ նկատել, որ մեզ խրախուսելու, ուղղորդելու առումով այդ բնագավառում աշխատանք է տարվում:

Ֆելիքս ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԸ ԲԱՐՁՈՒՆՔ Է, ՈՐԻՑ ՎԱՂ ԹԵ ՈՒՇ ԻՋՆԵԼՈՒ ԵՔ

Ի քանի օր առաջ «Հրապարակ» օրաթերթի անունից էլեկտրոնային հարցում էի ուղարկել Ալավերդու համայնքապետարան: Հարցը վերաբերում էր քաղաքի համար սովորական մի թեմայի՝ քաղաքի զբոսայգիներին, պուրակներին եւ հանգստի գոտիներին: Հարցրել էինք՝ ինչպե՞ս են պատրաստվում գարուն-ամառ սեզոնին, ի՞նչ աշխատանքներ են նախատեսվում կատարել: Թվում է՝ բարդ հարց չէր՝ ո՛չ քաղաքական էր, ո՛չ վիճահարույց, ո՛չ անձնական բնույթի: Իսկ պատասխանը հետաքրքիր կարող էր լինել քաղաքի բնակիչներին:

Սակայն պարզվեց, որ նույնիսկ նման պարզ հարցը կարող է հանդիպել բյուրոկրատական պատի: Սկզբում պատճառաբանեցին, թե էլեկտրոնային նամակը թերի է, իբր անհրաժեշտ են լրացուցիչ տվյալներ: Մինչդեռ նամակում նշված էին բոլոր անհրաժեշտ տվյալները՝ լրագրողի անունը, հեռախոսահամարները, էլեկտրոնային հասցեն: Երկրորդ նամակը գրեցինք, հարցումը գրանցվեց: Թվում է՝ մանրուք է, բայց հենց նման մանրուքների մեջ է երեւում վարչարարական մտածողության իրական պատկերը: Երբեմն տպավորություն է ստեղծվում, թե տեղեկատվություն ստանալու համար լրագրողը պետք է հաղթահարի մի ամբողջ ընթացակարգային լաբիրինթոս: Սակայն պատմությունն այստեղ չի ավարտվում:

Դեբեդ գետի խնդիրներին նվիրված իմ հոդվածից հետո նման մի հարցում ուղարկեցի ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ նախարար Համբարձում Մաթեւոսյանին: Հոդվածում բարձրացված էին Դեբեդ գետի ավազանի, ջրային ռեսուրսների կառավարման հարցերը, տարիներով կուտակված խնդիրները: Հետաքրքրվել էի՝ արդյո՞ք նախարարությունն ունի ծրագրեր՝ այդ խնդիրների լուծման ուղղությամբ: Նորից բյուրոկրատական պատնեշի բախվեցինք: Նախարարությունից պատասխանեցին, որ էլեկտրոնային նամակը բավարար չէ. անհրաժեշտ է ստորագրություն: Թվայնացման դարաշրջանում այս պահանջն առնվազն տարօրինակ է հնչում: Քաղաքացիները պետական ծառայություններից օգտվում են առցանց, վճարումներ են կատարում էլեկտրոնային համակարգերով, դիմումներ են ներկայացնում թվային հարթակներով, իսկ լրագրողի նամակը չպետք է ուղարկվի էլեկտրոնային փոստով: Երկար հեռախոսազրույց ունեցա նախարարության աշխատակիցների, ապա լրատվության բաժնի աշխատակցի հետ, փորձում էի հասկանալ, թե ինչու պետք է մի պարզ հարցում վերածվի ձեւական ընթացակարգերի շարանի: Բայց գերատեսչությունների բյուրոկրատական պատը միայն նամակներով չի սահմանափակվում: Երբեմն նյութ պատրաստելիս անհրաժեշտ է ընդամենը մեկ պարզաբանում, մեկ նախադասություն, որը պետք է լրացնի օպերատիվ տեղեկատվությունը եւ հոդվածը դարձնի ամբողջական, ու դա հնարավոր է անել հեռախոսով, սակայն այստեղ էլ է կրկնվում նույն պատմությունը:

Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի աշխատողների 45-օրյա գործադուլի մասին նյութ պատրաստելիս փորձել էի կապ հաստատել կոմբինատի տնօրեն Վիլեն Հակոբյանի հետ: 2 օր շարունակ զանգահարեցի, աշխատակցին ներկայացրի հարցերը, խնդրեցի կազմակերպել զրույց տնօրենի կամ հասարակայնության հետ կապերի պատասխանատուի հետ: Խոստացան ու չարեցին: Մինչդեռ խոսքը վերաբերում էր քաղաքի համար կարեւոր հարցի: Ախթալան փոքր քաղաք է, որի տնտեսական կյանքը մեծապես կախված է հենց այդ ձեռնարկությունից: Այստեղ գործադուլը պարզապես աշխատանքային վեճ չէ, այլ ամբողջ քաղաքի սոցիալական կյանքն է խաթարվում: Բնական է, որ ուզում էինք լսել ոչ միայն գործադուլ անողների, այլ նաեւ ձեռնարկության ղեկավարության դիրքորոշումը:

Նմանատիպ իրավիճակ առաջացավ նաեւ Վանաձորի ավագանու նիստի մասին նյութը պատրաստելիս: Քաղաքի համար կարեւոր նիստ էր՝ շուրջ 32 միլիոն դոլարի ծրագրային փաթեթ էր հաստատվելու: Բնական է, որ քաղաքացիները կցանկանային հասկանալ, թե ինչ ծրագրերի մասին է խոսքը, ինչ է արվելու այդ միջոցներով: Փորձեցինք պարզաբանում ստանալ համայնքապետարանի ղեկավարությունից, դիմեցինք մամուլի խոսնակին: Պարզվեց՝ նա տեղեկություն չունի ո՛չ նիստի մանրամասների, ո՛չ էլ ներկայացված ծրագրի մասին: Առաջարկեց գրավոր հարցում ուղարկել: Հարցրի՝ Դուք լրագրող աշխատե՞լ եք: Պատասխանը եղավ. «Դա ի՞նչ կարեւոր է»: Գուցե իսկապես կարեւոր չէ, բայց մամուլի հետ աշխատելու այս մշակույթը չիմացությունից է գալիս: Մամուլի խոսնակը կարող է տվյալ պահին տեղեկություն չունենալ, բայց պետք է ասի. «Կճշտեմ, մի փոքր ժամանակ տվեք»: Իսկ լրագրողին երկարատեւ նամակագրության ճանապարհով ուղարկելն իրենց ոչ պրոֆեսիոնալիզմի մասին է խոսում, մեր նյութն էլ կորցնում է իր օպերատիվությունը:

Այս ամենը մի հարցի է հանգեցնում. ինչպե՞ս են պետական եւ համայնքային կառույցները պատկերացնում իրենց հարաբերությունը հասարակության եւ լրատվամիջոցների հետ: Մարդիկ մեծ դժվարություններ են հաղթահարում պաշտոն ստանալու համար, խոստանում են ծառայել ժողովրդին, պաշտպանել հանրային շահը, լուծել խնդիրներ: Իսկ երբ հասնում են իրենց նպատակին, ամեն բան փոխվում է: Պաշտոնյան սկսում է իրեն զգալ ոչ թե հանրությանը ծառայող, այլ հասարակությունից առանձնացած մի փակ համակարգի ներկայացուցիչ:

Պաշտոնը մի տեսակ բարձունք է, բայց այդ բարձունքը հավերժ չէ: Լեռներ բարձրացող զբոսաշրջիկները կարող են որոշ ժամանակ մնալ գագաթին, բայց վերջում անպայման իջնում են ներքեւ: Իսկական ալպինիստները դա գիտեն հենց սկզբից՝ գիտեն, որ բարձունքը հաղթահարելուց հետո պետք է վերադառնալ մարդկանց մոտ: Պաշտոնյաներն էլ պետք է գիտակցեն, որ, վաղ թե ուշ, վերադառնալու են նույն հասարակության մեջ, եւ կարողանան ապրել մարդկանց մեջ, որոնց չեն արհամարհել, երբ բարձունքի վրա են եղել:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am

Ստորագրված է տպագրության 14.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԾԱՆՈԹԱՑԵԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻՆ ՈՒ ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄՅԱՆԸ

Երկու հայ տաղանդավոր անհատականությունների՝ Հովհաննես Այվազովսկու եւ Պետրոս Ադամյանի ծանոթությունը տեղի է ունեցել 1883 թվականի ձմռան վերջին: Այվազովսկին այդ ժամանակ ապրում եւ աշխատում էր Թեոդոսիայի իր առանձնատանը՝ երիտասարդ կնոջ՝ Աննա Սարկիսովայի հետ, եւ ցանկանում էր Թեոդոսիայում նավահանգիստ կառուցել: Այվազովսկու կտավները մեծ պահանջարկ ունեին եւ վաճառվում էին մեծ հաջողությամբ: Նա շատ էր ճամփորդում: Այն ժամանակ Ղրիմում նախատեսվում էր կառուցել Սեւաստոպոլի առեւտրական նավահանգիստը: Այվազովսկին հետաքրքրված էր, որ իր հայրենի քաղաքն արագ զարգանա, եւ որոշում է առաջ մղել Թեոդոսիայի ապագայի հետ կապված հարցերը՝ ճանապարհների եւ հաղորդակցության նախարարությունում: Նա նամակ է գրում այն ժամանակվա Ճարտարագետների խորհրդի նախագահ Վասիլի Սալովին, որ առեւտրային նավատորմը հարկ է կառուցել ոչ թե Սեւաստոպոլում, այլ՝ Թեոդոսիայում: Այդ առաջարկով նա մեկնում է նախ՝ Կերչ, ապա՝ Սիմֆերոպոլ, իսկ արդեն փետրվարի վերջին՝ Մոսկվա, որտեղ էլ տեղի է ունենում ճակատագրական հանդիպումն ու ծանոթությունը հայ տաղանդավոր դերասանի հետ: Այդ շրջանում Պետրոս Ադամյանը հյուրախաղերով գտնվում էր Մոսկվայում: Իմանալով այն մասին, որ Այվազովսկին ցանկություն է հայտնել հանդիպել իր հետ ու ծանոթանալ, Ադամյանը շտապում է հանդիպել մեծ ծովանկարչի հետ: Հանդիպումը կայանում է հայտնի հայ վաճառական Հովհաննես Անանյանցի տանը, որտեղ հյուրընկալվել էր Այվազովսկին:

Այդ ծանոթության մասին Ադամյանն իր օրագրում մարտի 6-ի թվով հետեւյալ գրառումն է թողել. «Անցյալ կիրակի ծանոթացա Այվազովսկու հետ, որը ցանկություն էր հայտնել հանդիպել ինձ հետ: Նա չորս րոպեում գրիչով ծովային տեսարան նկարեց ու նվիրեց ինձ: Կարող եք պատկերացնել միայն, թե որքան ուրախացա: Հետո նա ցանկացավ լսել ինձ: Ես կարդացի «Դարբիններ գործադուլը»՝ ի պատասխան նրա նվիրած նկարի: Նկարն առհավետ ինձ մոտ է, իսկ խոսքերս թռան ու անէացան օդում»:

Հետագայում երկու մեծ հայի ծանոթությունը վերածվում է ամուր բարեկամության: Այվազովսկին եւ Ադամյանը հետո հաճախակի են հանդիպել: Երկու մեծանուն հայազգի տաղանդները պարզապես չէին կարող չբարեկամանալ: 1883 թվականին Այվազովսկին բացել է մեծ ցուցահանդես՝ Սանկտ Պետերբուրգում: Պետերբուրգի ողջ բարձրաշխարհիկ հասարակությունն ու մտավոր սերուցքը հավաքվել էին՝ դիտելու Այվազովսկու նոր ծովանկարները: Այդ ցուցահանդեսին նա կարողանում է վաճառել մի քանի կտավ: Ուղեւորությունից գոհ՝ վերադառնում է Թեոդոսիա եւ պատրաստվում Հին Հունաստանի մշակութային ժառանգության հետ ծանոթանալու համար իր՝ առաջիկայում կայանալիք ճամփորդությանը: Ի դեպ, Այվազովսկու ջանքերը զուր տեղը չեն անցել: Թեոդոսիայի առեւտրական նավահանգիստը կառուցվել է 1892-95 թթ.: Եվ նավահանգիստը գործում է մինչ օրս:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am